ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

1898 թ.

Ա. ԳՐՔԻ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՄՕՐԷՒ ԻՇԽԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

Թարգ. Վահան Ծ. Վ. Բասուտանեան

ԱՋԴ

Սոյն պատմական վիպասանութիւնը գրած է յունարէն լեզուով։ Մենք թարգմանեցինք ռուերէն թարգմանութիւնից [1])։ Թէպէտ այդ պատճառով ընագիրը պէտք է անշուշտ շատ բան կորցնէր իւր արժանաւորութիւններից, բայց եւ այնպէս՝ եթէ ընթերցողը ուշադրութեամբ կկարդայ այս պատուական վիպասանութիւնը, նա կզգայ իւր սրտի եւ հոգու վերայ այն վսեմ եւ ոգեւորիչ տպաւորութիւնը, որ գործում է սա։ Եւ այդպիսի դէպքերում մենք հասած կլինենք մեր թարգմանութեան նպատակին։

ՎԱՀԱՆ Ֆ. ՎԱՐԴ. ԲԱՍՏԱՄԵԱՆ

---

[1]) Ռուսերէն թարգմանութիւնը տպուած է „Семейные вечера" ամսագրի 1875 թ. 1—4 համարներում։ Հայ թարգմանութեան լեզուն հարկ եղաւ մի փոքր սրբագրել։

ԽՄԲ.

ՄՕՐԷԻ ԻԶԽԱՆ

ՎԻՊ

1.

ՍՊԱՍԵԼՈՎ ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍԻՆ

1209 թուականի Սեպտեմբեր ամսի մի պայծառ օր էր։ Լակեդեմոնի բնակիչները զարդարուել էին տօնական լաւագոյն շորերով։

Դեռ նոր էր լուսանում, բայց ժողովուրդը խումբ խումբ կիտուում էր մի բոլորաձև ահագին շինութեան շուրջը։ Այդ բիւզանդական ճաշակով շինուածքի աւերակները երևում են տակաւին մինչև այսօր։ Տեսնելով այդ բոլոր շարժողութիւնը, այդ շտապը և տագնապը, ժողովրդի այդպիսի մեծագումար բազմութիւնը, կարելի էր կարծել թէ՝ Սպարտան վերստին ածնում է իւր հինաւուրց տօները, կամ՝ վերադառնալով Լիկուրգոսի հաստատութեանց ժամանակներին՝ վերստին, որպէս հնումը, հաւաքւում է ժողովուրդը հրապարակի վերայ։

—Ի՞նչ ես անում, կո՞յր ես, ի՞նչ է, գոչեց մէկը ամբոխի մէջ, ուժգնութեամբ մղելով մի արտաքին դրութեամբ վայրենի և ոչխարի մորթերով ծածկուած հովուին, որ կոխեց գոչողի ոտը։

—Թողէ՛ք անցնեմ, աղաղակում էր հովիւը, ձեռքերը թափ տալով,—ես կամենում եմ ներս մտնել։

—Եթէ կամենում ես մտնել, գնա՝ ուրեմն քո ոտների վերայ, և ոչ թէ ուրիշի։

—Ես գնում եմ ինչի վերայ որ պատահում է, պատասխանեց հովիւը, ցոյց տալով երկու հսկայական բռունցք,

որ կարող էին յարգանք ազդել ամենաանվեհեր մարդուն անգամ։—Հեռուից եմ եկած տեսնելու մենամարտութիւնը։

—Եթէ եկել ես հեռուից, խրոխտաբար խրատում էր առաջինը,—կարող ես վերադառնալ և գնալ աւելի հեռու։

—Մի՛ շտապիր այդպէս, ասաց մի երիտասարդ Արգիացի, որ կանգնած էր Հովուի մօտ,—մինչև իշխան Գոդֆրիդի գալը չի սկսուի մենամարտութեան հանդէսը։

—Ա՜խ, ուրեմն նա դեռ ևս չէ՞ եկել, հարցրեց Հովիւը։

—Ի հարկէ ոչ, պատասխանեց Արգիացին։—Ես միայն նորան եմ սպասում. կտեսնեմ նորան և իսկոյն կերթամ։

—Բայց, ինչպէս տեսնել նորան։ Ասա՛ ուղիղը, ընկեր, ծիծաղելով ասաց Լակեդեմոնացին, որ առաջինը սկսեց խօսել. քեզ ցանկալի է տեսնել չքնաղ Աննային, և ոչ թէ իշխան Գոդֆրիդ դը—Վիլլարդուինին։ Այն օրից, երբ դու տեսել ես Աննային, խելագարուել ես։

—Հեմ ուրանում, ասաց Արգիացին.—նա հրաշք է գեղեցկութեան, նա աւելի գեղեցիկ է քան թէ արեգակը, աւելի թարմ է քան թէ Արտոսի պարտէզների բոլոր վարդերը։ Բայց նորան տեսնելու համար չէ՞ որ ինձ կհարկաւորի յետաձգել գնալս մի քանի ժամանակ։

—Ո՞վ է դա, այդ գեղեցիկ Աննան, հարցրեց Հովիւը Արգիացուց։

—Ի՞նչպէս, պատասխանեց նա,—դու Հովիւ ես Վլաքից, դու պէտք է նորա հայրենակիցը լինիս։ Աննան Եվլադայի իշխանի աղջիկն է։

—Մեր Թէոդոր իշխանի աղջի՞կը։ Բայց, ի՞նչի համար է նա այստեղ։

—Նա այստեղ է իւր պապի հետ։

—Ա՜խ, ծերունի Պետրալիֆասի՞ հետ։

—Ուրեմն, դու նորան ճանաչո՞ւմ ես։

—Ի՞նչպէս չճանաչեմ. ես վլաք եմ, մինչդոյն նահանգից, Արտայում ես յաճախ տեսել եմ իշխանին և նորա աներոջը։ Ուրեմն Պետրալիֆասը կգա՞յ այսօր այստեղ իշխան Գոդֆրիդի հետ։

—Անկասկած, կգայ, պատասխանեց Արգիացին։—Այնպէս չէ՞, ընկե՛ր։

—Ի հարկէ, ասաց Լակեդեմոնացին։ — Գոդֆրիդ դը—Վիլլարդուինը մեծ պատիւ և ուշադրութիւն է ցոյց տալիս իւր հիւրին։ Հէնց նորա համար պատրաստեց նա և այսօր մենամարտութեան հանդէսը. Աննան պիտի յանձնէ յաղթողին ոսկի պսակը։

—Աննան, գոչեց Արգիացին.—պէտք է մնալ և տեսնել։ Բախտաւոր է նա, ով կստանայ մրցանակը նորա ձեռքից։

—Իսկ ես կարծում եմ որ՝ աւելի բախտաւոր կլինի նա, ով կստանայ նրա իսկ ձեռքը, ծիծաղելով ասաց Լակեդեմոնացին։

—Ինչու է եկել այստեղ մեր իշխանի անները, հարցրեց Հովիւը։—Նա ի՞նչ գործ ունի օտար երկրում։

—Օտար երկրո՞ւմ, գոչեց մէկը ամբոխից, Կալամատի բնակիչ. բայց Պետրալիֆասը այստեղ ինչպէս իւր տան մէջն է։

—Մի՞թէ, ինչո՞ւ։

—Ինչու։ Ահա՛ ինչու, պատասխանեց մեսսինացին։—Երբոր Պետրալիֆասը Ալէքսիանոս կայսեր սիրելի պալատականն էր, այն ժամանակ նա, իբրև խորամանկ և փորձառու մարդ, հոտով զգաց որ՝ կայսերութեան գործերը վատ են. նա հոտ առաւ որ՝ օդի մէջ շրջում էր փոթորիկ, և խորամանկը հոգս քաշեց դէպ ժամանակին փոխել ոսկու վերայ կայսեր բարեկամութիւնը։ Բայց մտածելով որ՝ և ոսկիքը կորչում են շատ անգամ խառնաշփոթ ժամանակ, Պետրալիֆասը նոցանով հողեր գնեց Մօրէում, այնպէս որ այժմ Կալամատի և Մանի ամենապտղաբեր դաշտերը, այն բոլոր երկիրները, ուր չեն բնակւում սլաւոնները, պատկանում են այդ ծերունուն։ Ահա՛ թէ ինչու նա Մօրէումն է։

—Բայց գուցէ կայ և մի ուրիշ պատճառ, նկատեց Լակեդեմոնացին խորհրդաբար աչքով անելով։

—Ո՞րպիսի պատճառ ձեր կարծիքով, հարցրեց կալամատացին։

—Ասում են թէ իբր նա իւր թոռնուհին տալիս է Գոդֆրիդ դը-Վիլլարդուինին, մեր կուսակալի որդուն։

—Գոդֆրիդի՞ն, ձեր կուսակալի որդո՞ւն։ Ով այդ ասում է, սխալւում է, ասաց մի յոյն, որ լսում էր այդ խօսակցութիւնը։—Աննան կամուսնանայ Տօնի եղբօրորդուհետ։

—Ի՞նչ Օտօն, հարցրեց Արգիացին։

—Օտօն դը-Լառոշ, Աթէնքի իշխան։ Եկլադայի իշխանին ձեռնտու է խնամենալ Ատտիկէի իշխանի հետ։

—Բայց, ասաց Լակեդեմոնացին,—Նորան աւելի ևս ձեռնտու է խնամենալ Պելոպոնէսի իշխանի հետ. չէ՞ որ դը—Լառոշը նորա իշխանութեան տակն է։

—Ի հարկէ, պատասխանեց յոյնը,—եթէ Վիլլարդուինը լինէր իսկական տէրը, բայց նա միայն կուսակալ է։

—Կուսակալ կամ տէր—միևնոյն է, պատասխանեց Լակեդեմոնացին։—Ես կցանկայի տեսնել թէ՝ ո՞ր տէրը բարձր է Վիլլարդուինից. նա իւր հօրեղբօր, ծերունի Գոտֆրիդի արժանաւոր ժառանգն է։

—Ա՜խ, Ռոմանիայի մարաջախտէ. այո՛, նա խելօք և քաջ ասպետ էր, ասաց Արգիացին։

—Երկու կայսրը, առաջ Բալդուինը, իսկ յետոյ Հենրիկոսը, հաւասար կերպով յարգում էին նորան, աւելացրեց սպարտացին։—Իբրև նշան յարգանաց դէպի ծերունի Գոդֆրիդը, Հենրիկոս կայսրը առաջարկեց նորա եղբօրորդուն, մեր կուսակալին, ընտրել իւր ուզած երկիրը։

—Եւ նա ընտրեց Մորէ՞, հարցրեց հովիւը։

—Նա ոչինչ չընտրեց, պատասխանեց Կալամատցին։—Նա պատասխանեց թէ՝ ընտրութիւնը թողնում է իւր թըրին—և դարձաւ Շամպանացուն ատորադրեալ իշխան։

—Այսինքն, նկատեց Լակեդեմոնացին, նա տէր ընտրեց իւր համար Շամպանիի իշխանին, որ իւր մտերիմ բարեկամն է, պատերազմում էր նորա հետ միասին, և նոցա միացած սուրերը նուաճեցին ամբողջ Պելոպոնէսը։

—Չէ՛, ոչ ամբողջը, պատասխանեց Արգիացին ինքնահաճոյ շեշտով,—աշխատեցէք դուրս հանել Արգոսը, Նավիլիան, Կորնթոսը և Մոնեմբազիան։

—Է՛հ, թո՛ղ այդպէս լինի, այս օրուան համար կհանեմ, ծաղրում էր Լակեդեմոնացին, բայց թէ վաղը ի՞նչ կլինի—կտեսնե՞նք։

—Բայց սա առաջին տարին չէ որ՝ դուք տեսնում էք, պարծենալով ասաց Արգիացին։—Մենք ունինք ամուր պարիսպներ. ինքը կայսրը փորձեց խորտակել նոցա, բայց չը-

կարողացաւ։ Եւ բացի սորանից, այդ պարսպների մէջ ապրում է Առիւծ (Լեւոն) Սգուօրսը։

—Է՞հ, հարեւան, պատասխանեց սպարտացին.—մենք էլ ունէինք պարիսպներ, եւ այդ պարսպների մէջ նոյնպէս ապրում էր Առիւծ Խամարէթը։ Մենք հինգ օր պաշտպանւում էինք, բայց ի՞նչ կարողացանք անել, թէպէտ, կարծեմ, դուք էլ լաւ գիտէք, թէ մենք ի՞նչպէս էինք կըռւում։ Ֆրանկները տիրել են մեր բոլոր երկրին, իսկ դուք յոյս ունիք մի՞նակ ազատուիլ ջրհեղեղից։

—Այո՛, յոյս ունինք, ասաց Արգիացին, իսկ յոյսը յաջողութեան կէսն է։

—Բայց այն երկիրները, որ նուաճել է Վիլլարդուինը, պատկանում են նորա մեծաւորին, անվստահութեամբ հարցրեց Հովիւը։

—Շամպանիի իշխանը չէ մտածում մեր վերայ, նկատեց կալամատցին։—Նա կալուածներ ունի Ֆրանսիայում, եւ ասում են մինչեւ անգամ որ՝ նա այստեղ երբէք չի գայ։

—Դիցուք թէ այդպէս է, բայց չէ՞ որ նա կարող է մէկ ուրիշ մարդ ուղարկել այստեղ իւր տեղը, պատասխանեց արգիացին։

—Ա՜խ, դու կարծում ես որ՝ կարող է։ Դէ՛, որ այդպէս է, մենք էլ կիմանանք ասել մեր ասելիքը—Վիլլարդուինը լաւ կուսակալ է, բայց մենք էլ ոչխարներ չենք, մեր վիճակը չէ կարելի տնօրինել ում խելքը ինչպէս որ կփչի։

—Արժէ՞ խօսել, ընկեր։ Այս բոլոր խօսակցութիւնները չէ՞ որ ոչինչ հետեւանք չեն կարող ունենալ։ Շամպլիտը մեր իշխանն է. նա կկարգադրէ այնպէս, ինչպէս Աստուած Նորան միտք կտայ։ Բայց, մենք կարող ենք փոքր ինչ առաջ գնալ, բաւական տեղ բացուեցաւ. Դէ՛, պարոն Հովիւ, բա՛ց ճանապարհը։

—Բայց կուսակալը այստեղից կանցնի իւր պալատականներով, հարցրեց Հովիւը։

—Ի հարկէ այստեղից, պատասխանեց մեսինացին։ Դէ՛, գնա՛ առաջ։

—Ինքներդ գնացէք առաջ, եթէ այդպէս ցանկանում էք, իսկ ես կսպասեմ այստեղ, պատասխանեց Հովիւը։

Եւ այդ խօսքերից յետոյ նա ձեռքերը ծալեց կուրծքի վերայ, պինդ կանգնեց իւր տեղում, թողեց անցնել իւր մօտից բոլոր ամբոխը, և յետոյ մնաց նոյն դրութեան մէջ բոլոր ժամանակ, իբրև մի անշարժ ժայռ, դէմ դնելով ժողովրդի նոր հոսանքներին։

2.

ՎԻԼԼԱՐԴՈՒԻՆ ԿՈՒՍԱԿԱԼԻ ՏԱՆԸ

Մինչդեռ վերը նկարագրածը կատարւում էր կրկէսի ռների մօտ,—կուսակալի պալատի մէջ նոյնպէս մեծ շարժողութիւն էր։ Ասպետները, երկաթի զրահներով զարդարուած անդադար ելումուտ էին անում այնտեղ. դահլիճների մէջ լսւում էր զէնքերի զրնգոց. բակումը հնչում էր ձիերի խրինջոցը և ախոռապահները շրջեցնում էին նոցա։ Պալատի դռների մօտ խռնւում էին մեծ բազմութեամբ բարոնները, որ յաղթել էին և տիրել Պելոպոնէսին, մի քանի ընիկ իշխաններ, շատ կանայք—ֆրանսիացիներ և յոյներ։ Ամենքը սպասում էին կուսակալի դուրս գալուն։

Վերջապէս՝ վարագոյրը, որ բաժանում էր դահլիճը կուսակալի սենեակից, բարձրացաւ և կուսակալը մտաւ դահլիճ։

Վիլլարդուինը միջին տարիքի մարդ էր, բայց դէմքով աւելի երիտասարդ էր երևում։ Ամենից առաջ նա ողջոյն տուեց կանանց, և յետոյ՝ դառնալով դէպի բոլոր հիւրերը, ժպտալով ասաց.

—Կարծեմ, ժամանակ է գնալու։

Բայց այդ իսկ րոպէին, երբ արդէն ամենքը պատրաստուել էին դուրս գնալ դահլիճից, ծառան յայտնեց որ՝ մի հոգևորական անձն ցանկանում է տեսնել կուսակալին։

—Թո՛ղ գայ երեկոյեան, այժմ ժամանակ չունիմ, ասաց Վիլլարդուինը։

Ծառան գնաց, բայց մի րոպէից յետոյ վերադարձաւ յայտնելով թէ՝ քահանան անպատճառ պահանջում է տեսութիւն։

—Ի՞նչպէս, պահանջում է տեսութիւն երբ ես բացասեցի, գոչեց Վիլլարդուինը։—Այո՛, այդ պարոնները վերջապէս կորցրին բոլոր չափը...։ Դոքա ցանկանում են իշխե՛լ իմ վերայ։ Այդ չի լինի... Ասացէք որ՝ ես չե՛մ ընդունում։

—Աստուածային օրհնութիւնը թող իջնի ձեր վերայ, լսուեցաւ ձայնը դրան մօտ։

Վարդապետը չսպասեց կուսակալի պատասխանին և ինքը ներս մտաւ։

—Ժամանակ չունիմ ձեզ հետ խօսելու, հայր սուրբ։ Գնացէ՛ք, գոչեց Վիլլարդուինը զայրացած։

—Աստուածային օրհնութիւնը թող իջնի ձեր վերայ, —կրկնեց վարդապետը չշարժուելով իւր տեղից և խորը գլուխ տալով։

Կուսակալի երեսը կնճռոտուեցաւ, բոլոր ներկայ եղողները սարսափ զգացին, նոքա լաւ գիտէին Վիլլարդուինի կատաղի բնաւորութիւնը...

Բայց որպէս մեծ էր ամենքի զարմանքը, երբ Վիլլարդուինը մօտեցաւ վարդապետին և հեզութեամբ ասաց.

—Հայր սուրբ, դուք եկել էք անյարմար ժամանակ. ես այժմ պատկանում եմ կանանց... բայց թող երբէք ոչ ոք չասէ թէ՝ Գոդֆրիդ Վիլլարդուինը չլսեց մեր սուրբ եկեղեցու պահանջները։ Ասացէք, ի՞նչ էք կամենում, միայն շուտով։ Համեցէ՛ք։

Եւ կուսակալը տարաւ վարդապետին իւր սենեակը։

Այդպիսի խափանմունքը շատ հաճոյական չէր հիւրերի համար։ Անցաւ մի քանի րոպէ սպասելում... վարագոյրը չէր շարժւում, և դահլիճի մէջ նորից սկսուեցան խօսակցութիւններ։

Դահլիճի մի անկիւնում նստած էր մի երիտասարդ մարդ, որ գրաւում էր իւր վերայ բոլորի ուշադրութիւնը. սևորակ աչքերը, խոհական դէմքը, ուռուցիկ մտածող ճակատը, արտայայտում էին երիտասարդի մէջ վաղահասուն ծանրարարոյութիւն—դա Վիլլարդուինի որդին էր—Գոդֆրիդ։

Նա խօսում էր կաթոլիկ եպիսկոպոս Բենուայի հետ, որ Պատրասի մետրապօլիտի յաջորդներից մինն էր։ Պէլոպո-

նէսի նուաճողները բաժանեցին երկիրը տասը եկեղեցական առաջնորդութեան, որպէս և քաղաքական կառավարութեան կողմից տասն և երկու բարձրութեան:

Բենուան գրեթէ հասակակից էր Գոդֆրիդին. նոքա ուսում ստացան միասին, և ասում էին մինչև անգամ որ՝ յատկապէս այդ հանգամանքի շնորհիւ Բենուան ստացել էր իւր բարձր աստիճանը: Նա միայն նախընթաց օրը վերադարձել էր Կ. Պոլսից, ուր ուղարկել էր նորան կուսակալը կրօնական գործերով: Եպիսկոպոսը ոգևորուած պատմում էր իւր ընկերին (Գոդֆրիդին) մայրաքաղաքի հոյակապութեան մասին. մանաւանդ նա ոգևորուում էր, գուցէ աւելի քան թէ վայել էր մի հոգևորականին, կայսերական պալատի շքեղութեամբ, պալատական ասպետների փայլով և կանանց գեղեցկութեամբ, որք կազմում էին պալատի զարդը:

—Էհէ՛, սրբազան հայր, ասաց Գոդֆրիդը ժպտալով, ձեր ոգևորութեան միւս բոլոր առարկաները դեռ ևս փոքր 'ի շատէ տանելի են. բայց ինչ որ վերաբերուում է վերջինին, եթէ ես լինէի Պատրասի արքեպիսկոպոսի տեղը, ես կարգից կլրկէի ձեզ:

—Եւ կլինէիք շատ անշնորհակալ մարդ, սիրելիս:

—Անշնորհակա՞լ: Բայց ի՞նչու:

—Որովհետև երբ ես շլացած աչքերով նայում էի կայսերական երկնակամարի բոլոր այդ աստղերի վերայ, ամենից աւելի մտածում էի ձեր մասին:

—Ի՞մ մասին: Զարմանում եմ ձեր իսկ և իսկ քրիստոնէական անձնուիրութեան: Բայց չէ՞ կարելի արդեօք իմանալ թէ ի՞նչպէս էր այդ:

—Այդ գեղեցիկ երկնակամարի վերայ մի աստղ էր փայլում ինչպէս արեգակ—մատաղահաս օրիորդ, և մտքիս մէջ նորան նշանակեցի ձեզ համար:

—Ա՜խ, ահա՛ ուրեմն ո՞րպիսի ծանր գործերով էք զբաղուած եղել դուք Կ. Պոլսում: Դուք կամենում էիք ինձ պսակել բռնադատութեամբ, առանց իմ գիտութեան:

—Բայց, ի՞նչու և այդպէս չլինէր, պատասխանեց եպիսկոպոսը կէս մի հանաք—կէս մի շիտակ:—Կարծեմ որ՝ դուք տեղիք չէիք ունենայ գանգատուելու, եթէ ասեմ ձեզ որ՝ այն օրիորդը, որը ես կցանկանայի առաջարկել ձեզ

կնութեան, մի ամենաչքնաղ էակ է, որպիսին Աստուած հաճել է ուղարկել երբ և իցէ մահկանացուների երջանկութեան համար, ամենակատարելագոյնն է այն բոլոր կանանցից, որք երբ և իցէ զարդարել են մի թագաւորի պալատը։

—Սրբազան հայր, ասաց Գոդֆրիդը, ձեր յափշտակութիւնը, բացի նորանից որ՝ փոքր ինչ սատանայական գոյթակղութիւն ունի, անարդար է կացուցանում ձեզ դէպի ուրիշ թագաւորների պալատները։ Նայեցէք ահա՛ այն օրիորդի վերայ, որ նստած է մօտս կշտին։ Կվստահանա՞ք արդեօք և այժմ ասել որ՝ ձեր չքնաղ բիւզանդացուհին դորանից աւելի գեղեցիկ է։

—Ո՛հ, ո՞վ է դա, հարցրեց եպիսկոպոսը, առաջին անգամ միայն ուշադրութիւն դարձնելով դահլիճի այն կողմի վերայ։

—Այժմ յիրաւի տեսնում եմ որ՝ դուք այս երկրից չէք, ծիծաղելով ասաց Գոդֆրիդը.—մի՞թէ դուք չէ՞ք ճանաչում Աննային, Ելլադայի իշխանի աղջկան։

—Ա՛խ, դա՞ է ուրեմն Աննան, ասաց եպիսկոպոսը։—Իսկ այն երիտասարդ մարդը, որ այնպէս համարձակ խօսում է նորա հետ, ո՞վ է նա։

—Նա Գոտիէ ասպետն է, որ եկել է մեզ մօտ Աթէնքից։ Ես կարծում եմ որ՝ Օտօնը ուղարկել է նորան այստեղ յատուկ նպատակով—խնդրել Աննայի ձեռքը իւր եղբօրորդի և ժառանգ Գիւիի համար։ Բայց ինձ թւում է թէ՝ վատ դեսպան է ընտրել իւր եղբօրորդու շահերի վերաբերմամբ։

—Դա՞ է ուրեմն Թէոդորի աղջիկը։ Կ. Պոլսում ես շատ բան լսեցի դրա հօր քաջութեան մասին, և աւելի շատ աղջկայ գեղեցկութեան մասին։ Բայց իրականութիւնը գերազանցում է բոլոր նկարագրութիւններին։ Սակայն, այնուամենայնիւ ես շարունակում եմ պնդել և հաստատ մնալ իմ ընտրութեան վերայ։ Եթէ նա, որին ես որոշել եմ ձեզ համար, այդչափ գեղեցիկ չէ, բայց աւելի բարձր է իւր ծագումով և աւելի մօտ է կայսերական գահին։

—Բայց, ո՞վ է այդ փիւնիկը, հարցրեց Գոդֆրիդը։

—Ոչ այլ ոք է, սիրելիս, եթէ ոչ Ագնէս դը-Կուրտենէն։

—Կայսեր քրոջաղջիկը։

—Այո՛, նորա Ցոլանդա քրոջ աղջիկը։

—Բայց, արդեօք, Հենրիկոս կայսրը ունի՞ զաւակներ, հարցրեց Գոդֆրիդը, թողնելով արդէն հանաքը։

—Ո՛չ, պատասխանեց եպիսկոպոսը. նորա մահից յետոյ գահը կանցնի Պետրոս դը-Կուրտէնէի ձեռքը. Ագնէսի հօր և նորա մօր, խելացի Ցոլանդայի ձեռքը, որը այժմ էլ արդէն կառավարում է կայսրին իւր ձեռքում։

—Եթէ նա այդպէս մօտ է գահին, ասաց Գոդֆրիդը, անշուշտ կան ուրեմն արդէն շատ պտռողներ նորա ձեռքի։

—Բայց և ես չեմ ասում ձեզ թէ՝ առաջարկում եմ հեշտ յաղթութիւն. կան մինչև անգամ թագակիր...

Երիտասարդը բռնեց իւր խօսակցի ձեռքը և աչքերով ցոյց տուեց մի ծերունու վերայ, որ մօտենում էր դէպի նոցա ծանր քայլերով։ Ծերունին հագած ունէր հիանալի շորեր. նա կարճահասակ էր, սպիտակ մօրուքով, և խիտ յօնքերի տակից նետում էր շատ կենդանի և թափանցիկ հայեացքներ։

—Զգուշացէք, ասաց Գոդֆրիդը.—Պետրալիֆասի ականջը սուր է, իսկ մեզ ամենևին հարկաւոր չէ որ՝ նա լսէ մեր խօսակցութիւնը այդպիսի առարկայի մասին։

Պետրալիֆասը մօտեցաւ եպիսկոպոսին, ողջունեց նորան և հարցրեց—հանգստացե՞լ է նա արդեօք իւր ճանապարհորդութիւնից յետոյ։

—Ճանապարհորդութիւնից յետոյ մարդս շատ շուտով է հանգստանում բարեկամի յարկի տակ, պատասխանեց եպիսկոպոսը։

—Բայց սա դեռ ևս չէ հանգստացել իւր տպաւորութիւններից, ասաց Գոդֆրիդը.—նորին սրբազնութիւնը անդադար պատմում է ոգևորութեամբ կայսերական պալատի շքեղութեան մասին։

—Նորին պայծառափայլութիւնը կարող է ասել ձեզ—իրաւո՞ւնք ունիմ ես թէ ոչ, պատասխանեց եպիսկոպոսը։ Նա այն էլ էր ասում որ՝ Կ. Պոլիսը—քաղաքների թագաւորն է. նորա առաջև մեր Փարիզը—խրճիթների մի կոյտ է և միգամած ցեխի մէջ թաղուած։

—Կարծեմ, ինձ կարելի է անաչառ և անկողմնապահ

համարել, պատասխանեց Պետրալիֆասը.—բայց ես կասեմ որ՝ եթէ երբևիցէ հարց կբարձրանայ համաշխարհային մայրաքաղաքի մասին, միայն Կ. Պոլիսը կարող է յայտնել իւր իրաւունքը։

—Ի՛նչպէս կցանկանայի տեսնել այդ հռչակաւոր քաղաքը, գոչեց Գոդֆրիդը։

—Ձերդ բարձրութիւնը պէտք է անպատճառ գնայ Կ. Պոլիս, ասաց եպիսկոպոսը։ Աշնանը կանուխ գնում են այնտեղ կայսերական նաւերը, որք ձմեռում են այստեղ Պելոպոնէսում. ձեզ շատ յարմար կլինի գնալ նոցա հետ։

—Այդ բանի մէջ ես չեմ կարող ձայնակից լինել ձերդ սրբազնութեան կարծիքին, ասաց Պետրալիֆասը։—Նորին բարձրութիւնը արդէն խոստացել է գարնանը գնալ մեզ հետ Ելլադա։ Ի հարկէ Արտան Կ. Պոլիս չէ, բայց այնտեղ ապրում է մի բարի հարևան, որ բաց գրկով կընդունէ մեծ Վիլլարդուինի որդուն։

—Ես շատ ցանկանում եմ ծանօթանալ Ելլադայի իշխանի հետ, ասաց Գոդֆրիդը։—Ամեն տեղ գովաբանում են նորա խելքը և քաջութիւնը։

—Եւ դուք տեսնում էք թէ որչափ փափագում է իմ փեսան ամրապնդել իւր բարեկամութիւնը ձեր երևելի հօր հետ, ասաց Ծերունին։—Նա ինքը չկարողացաւ գալ այստեղ, բայց թոյլ տուեց իւր աղջկան ուղեկցել ինձ որ՝ նա լինի այստեղ իբրև նորա ներկայացուցիչ։ Նա անպատճառ կամենում էր ուղարկել մի դեսպան, որը հաճելի լինէր այստեղ։

—Սովորաբար, քաղաքավարութեամբ պատասխանեց Գոդֆրիդը, ամենամեծ քաջութեան կշռին ծաղկում է ամենաչքնաղ գեղեցկութիւն։

Այդ նկատողութիւնների առարկան—Աննան նստած էր դահլիճի միւս կողմում, կուսակալի կնոջ՝ Զապէլի մօտ, բարձոնների և երևելի տիկինների մէջ և գերազանցում էր նոցա ամենքին գեղեցկութեամբ և նազելութեամբ։ Նա բոլորովին արժանի էր այն զարմանքին և այն պատուին ուշադրանքին, որով շրջապատում էին նորան։

Նա հագած ունէր կապտագոյն շորեր արծաթի աստղիկներով զարդարած. վզի վերայ ադամանդեայ մանեակ. նոյնպիսի ադամանդեայ մի թագ զարդարում էր նորա սև հա-

ռուստ մազերը։ Աննայի ամեն մի շարժուածքը ներդաշնակ էր, ամեն մի հայեացքը — անուշ ժպիտ։

Աննայի մօտ կանգնած էր Գօտիէն - երիտասարդ, գեղեցկադէմ, շիկագանգուր ասպետ, ժիր և ուրախ։ Նա խօսում էր օրիորդի հետ, կրթնելով նորա աթոռի մէջքին։ Երբ Աննային հարկաւոր էր պատասխան տալ, նա սակաւ ինչ թեքում էր իւր սագանման վիզը։

— Ես ճանաչում եմ մի մարդ, ասում էր Գօտիէն, որ շատ կափսոսայ որ՝ ինքը չկարողացաւ այստեղ լինել այս հանդիսաւոր օրը։

— Մի՞թէ, հարցրեց Աննան։

— Ո՛հ, օրպիսի արհամարհանք է հնչում այդ բառի մէջ — մի՞թէ։ Կարո՞ղ եմ վստահանալ և հարցնել թէ՝ ինչո՞ւ է այդպէս։

— Պատճառը շատ պարզ է, պատասխանեց Աննան. — գուցէ դուք ճանաչում էք այդ մէկ մարդուն, բայց ես նորան չեմ ճանաչում։

— Բայց, եթէ ես ձեզ ասէի որ՝ այդ մէկ մարդը — Գիւի-դը-Լա-Ռօշն է.

— Ես կըկրկնէի միևնոյնը — ես նորան չեմ ճանաչում։

— Զգում եմ, պատասխանեց Գօտիէն, որ իմ դեսպանութեան նպատակը չպիտի յաջողուի, և իմ տէրը ուղարկելով ինձ այստեղ՝ սխալուել է իւր ընտրութեան մէջ։

— Դուք այդպէս էք կարծում, ժպտալով հարցրեց Թէոդորի աղջիկը։ Բայց չգիտեմ թէ՝ ի՞նչն է ստիպում ձեզ գալ այդպիսի եղրակացութեան։ Յամենայն դէպս, եթէ կը հարկաւորի իմ վկայութիւնը, ես կվկայեմ որ՝ ձեզ պակաս չէր եռանդ, որպէս և ճարտարաբանութիւն։ Եթէ ես խնդրէի ձեզանից նկարագրել ինձ նորան, ով որ ձեզ ուղարկել է, հաւատացած եմ որ՝ կասէիք ինձ թէ՝ նա բոլոր խաչակիրներից ամենաքաջն է, և թէ չկայ երկնքումը այնպիսի հրեշտակ, որ նորանից աւելի սիրուն լինէր։

— Ո՛չ, չնայելով իմ բոլոր եռանդին և հաւատարմութեան, ես չէի դիմի այդպիսի չափազանցութեան, ծիծաղելով պատասխանեց Գօտիէն։ — Ես հմուտ չեմ գնահատել տղամարդոց գեղեցկութիւնը. գիտեմ միայն որ՝ Գիւին ոչ կոյր է և ոչ կաղ։ Իսկ ինչ վերաբերում է նորա քաջու-

թեան, ես չեմ ներկայացնի նորան ոչ իբրև հսկայ և ոչ իբրև մարդակեր։ Բայց նա ասպետ է, որ ճանաչում՝է իւր պարտաւորութիւնները և որ երբէք չէ արել որ և իցէ անպատիւ կամ անարգ գործ։

—Դուք, տիրաւի, մեծ առաքինութիւններ էք յատկացնում նորան։ Կարող էք ասել նորան որ՝ ամեն մէկ համեստ ասպետ ունի այդպիսի առաքինութիւններ։

—Անկասկած. բայց Գիւին—Ամէնքի իշխանի եղբօրորդին է, իսկ այդ արժանաւորութիւնը չունի ամեն մարդ։ Ես կարծում եմ որ այս հանգամանքը աննշան չէ։

—Մի՞թէ, պատասխանեց առաջուան պէս Աննան։

—Բախտաւոր է Գիւին որ՝ այստեղ չէ։

—Ի՞նչու, հարցրեց օրիորդը։

—Որովհետև ես գիտեմ աչեր... երբ նոքա նայում են բարեհաճութեամբ,—գարունք են վերադարձնում երկրին, թափում են ծաղիկներ, բացում են երկինքը և բերում են գերերկրային երջանկութիւն։ Բայց երբ այդ աչերը նայում են անտարբերութեամբ—նոքա փչում են ձմեռ և ցուրտ, յիշեցնում են դժոխքը և նորա մռայլ բնակարանները։ Ես գիտեմ շրթունքներ... երբ նոքա ժպտում են,—յարուցանում են մեռելներ. բայց երբ այդ շրթունքներից դուրս է թռչում նզոված *մի՞թէն*.—նոքա մեռցնում են կենդանիներին։

—Բայց, ո՛րչափ շատ բաներ էք իմացել դուք, որի մասին ես հասկացողութիւն անգամ չունիմ, ասաց Աննան։—Ուրեմն, չգիտէ՞ք դուք արդեօք և չէ՞ք կարող ասել ինձ թէ՝ ո՞վ կլինի յաղթողը այսօրուան մենամարտութեան մէջ։

—Եթէ հարց լինէր թէ՝ ո՞վ պիտի ստանայ մրցանակը գեղեցկութեան համար և ես դատաւոր լինէի—չէի դժուանայ տալ պատասխանս։

—Շատ սիրո՛ւն, ասաց Աննան։—Բայց բանը այնտեղ է որ՝ հարցը վերաբերում է քաջութեան մրցանակին և ես պէտք է յանձնեմ յաղթողին այդ մրցանակը։ Ուրեմն, դուք ինչ կասէք,

—Զունի՛մ նախագուշակութեան ձիրք. բոլորը, ինչ որ կարող եմ ասել, այն է որ ես ինքս կցանկանայի յաղթող հանդիսանալ։ Եւ ասե՛մ ձեզ թէ՝ ինչո՞ւ։

—Ո՛չ, այլ լաւ է ասացէք թէ՝ ի՞նչ կանէիք ստացած մրցանակը։

—Առանց երկբայութեան, պատասխանեց Գոտիէն պաշտօնական ձայնով, ես պարտաւոր կլինէի տանել այն իմ իշխանին և տիրոջ—Գիւի դը-Լա-Ռոշին։

—Ո՛հ, միշտ այդ Գիւին, գոչեց, գրեթէ անհամբերութեամբ, օրիորդը։—Դուք այնպէս կանէք որ՝ կստիպէք ինձ ատել նորան։

Այդ միջոցին կարգադիրը յայտնեց որ՝ մենամարտութեան մասնակցող ասպետներին ժամանակ է գնալ կրկէսը և պատրաստ լինել։

Երբ Գոտիէն բարև մեա՛ էր ասում Աննային, նա ասաց.

—Ով ցանկանում է ստանալ յաղթութեան պսակը։ պիտի նորան արժանանայ ինքը.... իսկ ով այն ստանում է,—չէ տալի ուրիշին...

Այդ խօսքերը վերջացան հրաշալի և զմայլելի ժպիտով։

Ցետոյ Աննան դարձրեց երեսը դէպի միւս կողմը, և Գոտիէն դուրս գնաց կծոտելով շրթունքները։

Դահլիճի միւս ծայրում, որ կողմը դարձրեց այժմ Աննան իւր երեսը, յանկարծ տեսաւ երկու սևորակ, բոցացայտ աչեր, որ նայում էին նորա վերայ։ Այնտեղ կանգնած էր, թիկն տուած պատուհանին, մի անզէնք երիտասարդ պարզ վերարկուով. նորա պատկերանման գեղեցիկ և վայելչակազմ կազմուածքի մէջ ցոլում էր մի տեսակ վեհութիւն, բայց գլուխը կորացած էր կուրծքի վերայ։ Սև գանգուրները շրջանակում էին գունատ երեսը. կիսաբաց շրթունքի վերայ խաղում էր դառն ծաղր։

Դա առիւծ (Լեւոն) Խամարէթն էր, լակեդեմոնացին, որի մասին եղած խօսակցութիւնը մենք լսեցինք կրկէսի մօտ։

Վառելով սպարտացիների մէջ հին քաջութեան վերջին կայծը, Խամարէթը յոյս ունէր ընդդիմանալ ֆրանկների արշաւանքին և մեծ քաջութեամբ դիմադրեց հինգօրեայ պաշարմունքին։ Բայց այնուամենայնիւ Սպարտան ընկաւ յաւիտեան և առիւծ Խամարէթի թուրը փշրուեցաւ ասպետների երկաթի զրահի վերայ։ Վիլլարդուինը և՝ Սպարտայի վերաբերմամբ գործ դրեց նոյն խոհեմ քաղաքականութիւնը, որ գործ էր ածում բոլոր նուաճած երկիրների վերաբերմամբ.

նա թողեց քաղաքացիների ձեռքին իւրեանց արտօնութիւն-ների մեծագոյն մասը։

Այն ժամանակից ի վեր, երբ Պետրալիֆասը հիւր էր նորա մօտ, Վիլլարդուինը, կամենալով հաճոյանալ ծերուն-նուն, բոլոր հանդիսաւոր դէպքերում, որպիսին էր և ներ-կան, հրաւիրում էր քաղաքի նշանաւոր մարդկանց։ Ի հարկէ նոցա թւում պէտք է անպատճառ լինէր և Խամարէթը, ոչ միայն այն պատճառով որ՝ նա համարւում էր իբրև լակե-դեմոնի ամենաերևելի մարդիկներից մէկը, այլ և այն պատ-ճառով որ՝ ծառայելով երբեմն Եղլադայի իշխանի մօտ իբրև պալատական, Խամարէթը ծանօթացել էր այնտեղ Պետրա-լիֆասի հետ, որը ցոյց էր տալիս նորան մեծ յարգանք և մտերմութիւն։

Երբ Աննան տեսաւ երիտասարդին պատուհանի մօտ, նա խոնարհեցրեց իւր աչքերը նորա տխուր, թափանցող հայեացքի առջև և գլուխ տուեց Խամարէթին մի տեսակ շփոթութեամբ։

Խամարէթը մօտեցաւ նորան։

— Դուք այստեղ ներկայ էք իբրև պարզ հանդիսատես, պարոն Խամարէթ, — հարցրեց օրիորդը։

— Եւ այդքանը արդէն մեծ շնորհք է ստրուկների հա-մար, պատասխանեց նա դառնութեամբ։ — Երբ մեր տիրա-պետողները թոյլ են տալի մեզ երևալ իւրեանց աչքին, — միթէ շատ շնորհակալ չպիտի լինինք։

— Ի զուր էք այդպէս խօսում, ասաց Աննան։ — Եթէ դուք դուրս գաք կրկէսը, ոչ ոք իրաւունք չունի, — և ես հաւատացած եմ որ՝ ոչ ոք և չի ցանկայ արգիլել ձեզ մաս-նակից լինել մենամարտութեան։

— Իրաւո՞ւնք, — այժմ իրաւունքը գրւում է նիզակի սուր ծայրով.... իսկ մեր նիզակը կոտրո՞ւած է։ Իսկ ինչ կվե-րաբերուի ցանկութեան, կայ գոնէ մէկը, որ ինձ կարգիլի։

— Կայ մէ՞կը, ո՞ւմն է արդեօք այդ։

— Իմ սեփական. այդպիսի տեսարանները և հանդէս-ները զզուելի են ինձ։

— Աղգասիրական նախապաշարմո՞ւնք, ասաց Աննան։ — Խոստովանեցէք որ՝ այդ նախապաշարմունքը այնքան էլ անաչառ չէ։

—Այնքան էլ անաչառ չէ, մի տեսակ դառնութեամբ գոչեց Առիւծը։

—Դուք չէք սիրում այդ մենամարտութիւնները, ուր ասպետների գերազանցութիւնը անվիճելի է։ Նոքա մանկութիւնից սովոր են զէնք գործածել և այդ արհեստի մէջ նոքա չունին հակառակորդ։ Մեր հայրենակիցները չեն կարող մարտնչել նոցա հետ...

—Դուք շատ կողմնապահ չէք դէպի ձեր հայրենակիցները, ասաց Խամարէթը, կարմիր կտրած։—Բայց ի հարկէ, դուք բոլորովին իրաւացի էք։ Ցաղթուածները արժանի չեն որ՝ այլապէս դատէին նոցա մասին։

—Ես չեմ դատում և առաւել ևս չեմ դատապարտում մեր ազգը։ Եթէ ֆրանկներին վիճակուել է քաջութիւնը,—մենք դորա փոխանակ ունինք ուրիշ արժանաւորութիւններ։ Բայց, համաձայնուեցէք որ—քաջութիւն տեսնելով՝ շարժւում է սիրտը, վառւում է երևակայութիւնը... Ի՞նչ կարող է այդ ասպետներից աւելի փայլուն լինել, երբ նոքա ճակատը բարձր բռնած, աներկիւղ և աննախատելի հոգով, մենամարտութեան են կանչում ամբողջ աշխարհը, հպարտութեամբ յայտնում են որ՝ ոչնչից և ոչ ոքից չեն վախենում, չեն նահանջում ոչինչ բանի առջև, և նիզակներով ապացուցանում են իւրեանց խօսքերի ճշմարտութիւնը։ Միթէ նոցա չէ՞ն վիճակւում տղամարդերի գովասանութիւնները, կանանց ծափահարութիւնները։ Միթէ նոցա չէ՞ վիճակուած իշխել տիեզերքին...

—Իսկ մեզ վիճակուած է լինել նոցա ստրուկներ, գոչեց Խամարէթը, դեղնելով։—Ո՜հ Աննա՝, ինչո՞ւ ես չընկայ Լակեդեմոնի պարիսպների վերայ։

Աննան ժամանակ չունեցաւ պատասխանելու։ Դահլիճի մէջ սկսուեցաւ շարժողութիւն. վարագոյրը որի վերայ դարձրած էին գրեթէ բոլոր հայեացքները, շարժուեցաւ, և շուտով կուսակալն և վարդապետը երևեցան դահլիճի մէջ։

Դուրս գալով սենեակից, Վիլլարդուինը ասաց վարդապետին գրգռուած ձայնով։

—Գնացէք, հայր սուրբ, ասացէք ձեր մեծաւորին որ՝ եկեղեցու շահերը չեն հերետիկոսների և անուղղափառների

ձեռքում։ Ես ժողով կգումարեմ եպիսկոպոսներից. նոքա կվերջացնեն մեր միջի դատը։ Գնացէք խաղաղութեամբ։

Աբեղան խոնարհութեամբ գլուխ տուեց և դուրս գընաց դահլիճից, չհամարձակուելով այլևս մի բառ արտասանել։ Վիլլարդուինը մօտեցաւ Պետրալիֆասին, որ տակաւին խօսում էր երիտասարդ Գոտֆրիդի և Օլէնի եպիսկոպոսի հետ։

— Այս աբեղաները, ասաց կուսակալը, բոլորովին անտանելի են դառնում իւրեանց պահանջներով։ Ես տուի նոցա ամենալաւ կալուածքներ, իսկ երբ խնդրում եմ նոցանից չնչին կոպէկներ ընդհանուր գործի պաշտպանութեան համար, նոքա ուղարկում են ինձ մօտ դեսպաններ, որոնք ըսպառնում են Վատիկանի ամպրոպներով և նզովքներով։ Միթէ ես իրաւացի չե՞մ հարկ պահանջելով վանքերից, աւելացրեց Վիլլարդուինը դառնալով դէպի Պետրալիֆասը։

— Տուք զկայսերն կայսեր, պատասխանեց խորամանկ ծերունին փորձառու պալատականի ժպիտով և գլուխ տալով։

— Ես ժողով կգումարեմ եպիսկոպոսներից, ասաց Վիլլարդուինը։— Բայց տիկինները և ասպետները սպասում են անհամբեր։ Ժամանակ է գնալու։

Եւ մտնելով Պետրալիֆասի թևի տակ, Վիլլարդուինը առաջինը դուրս գնաց դահլիճից։ Նորան հետևեց բոլոր հասարակութիւնը։

3

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Եթէ այն ժամանակի քաղաքական շահերը պահանջում էին որ՝ սենեակի վարագոյրը իջեցրած լինէր Գոդֆրիդի և աբեղայի խօսակցութեան միջոցին,— մեզ համար այդպիսի գաղտնիքը յամենայն դէպս չունի նշանակութիւն։ Ընդհակառակն՝ մեր վիպասանութեան ընթացքի պարզութեան համար և Վիլլարդուինի բնաւորութիւնը գնահատելու համար մեզ հարկաւոր է լսել երկու խօսակիցների խօսակցութիւնը։

Այսպէս ուրեմն՝ մինչդեռ ազնիւ հպարակութիւնը փողերի ձայներով գնում է կրկէս,—եւ դառնանք փոքր ինչ և լսենք թէ ի՞նչ էր խօսւում այդ ոսկեհուռ վարագուրի ետևից, որի վերայ Պետրալիֆասը ձգում էր գաղտուկ այնքան զննող հայեացքներ։

Երբ Վիլլարդուինը ներս տարաւ վարդապետին իւր սենեակը և վարագոյրը իջաւ, այցելուն ընկաւ թախտի վերայ և մեկնուեցաւ ծանր շունչ առնելով։

—Ո՛ւֆ, ահա՛ մի ճանապարհորդութիւն։ Աբեղայական հագուստը լաւ է միայն հոգին փրկելու համար, բայց մանգալ դորանով Մեսսարէի (այդպէս էր կոչւում այն ժամանակ Արկադիան) սարերի վերայ ամենևին յարմար չէ։ Ես պատրաստ էի արդէն մի քանի անգամ ձգել սորան եղիճի մէջ, ու լաւ կհամարէի շրջել ոտից մինչև գլուխը զինաւորուած։

—Եթէ դու կարողացար շունչ առնել, սիրելի Մատիո՛, ասաց Վիլլարդուինը,—ասա՛ շուտով, ինչո՞ւ ես եկել այստեղ և ի՞նչ է նշանակում այդ շորափոխութիւնը։ Ի՞նչ կասես։

—Ես հաւատացած եմ որ՝ դուք նախագուշակում էք, պատասխանեց Մատիո դը-Մոնսը։

—Կոմս դը-Շամպլիտը հրաժարվո՞ւմ է յօգուտ իմ իւր աւատական իրաւունքներից Պելոպոնէսի վերայ։

—Դուք ուղիղ գուշակեցիք առաջին կէտը, բայց ոչ երկրորդը։

— Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ ես կամենում ասել։

—Ես ասում եմ որ՝ կոմս դը-Շամպլիտը յիրաւի հրաժարւում է իւր իրաւունքներից Պելոպոնէսի վերայ, բայց միայն ոչ յօգուտ ձերդ պայծառափայլութեան։

—Ա՛խ, ապա ուրեմն յօգուտ ո՞ւմ։

—Յօգուտ իւր եղբօրորդուն—Ռոբէր դը-Շամպլիտին։

—Մի՞թէ. դու հաւատացա՞ծ ես։

—Եթէ հաւատացած չլինէի, չէի շտապի գալ այստեղ ոտով Շամպանիից, այն ևս այսպիսի քուրձով։

—Ահա՛ որպիսի շնորհակալութիւն, գոչեց Վիլլարդուինը։ Ես նուաճեցի նորա համար Պելոպոնէսը, քաղաք քաղաքից յետոյ, և չնայելով որ՝ կարող էի ինձ վերապահել նորան

իբրև իմ սրի սեպհականութիւնը, իբրև արեան գնով գնած կալուածք,— ես բարեկամաբար և անձնուիրաբար դարձայ Շամպլիտի ստորադրեալ։ Այժմ նա ուրիշին է տալի իմ նուաճմունքների պտուղները. նա կամենում է որ՝ ես խոնարհեցնեմ ալեզարդ գլուխս ամեն մի երիտասարդի առաջև, այն պատճառով միայն որ՝ այդ երիտասարդը կրում է դը-Շամպլիտի անունը։ Ո՛չ, այս զառամեալ գլուխս վաստակել է, կարծեմ, արդէն իրաւունք խոնարհիլ միայն թագաւորի առաջև, և աւելի ոչ ոքի առաջև։ Ահա՛ ուրեմն նորը, որ դու բերել ես ինձ, ենթարկուելով այդպիսի վտանգներին և նեղութիւններին։

—Ի հարկէ։ Բայց միթէ դուք կարծո՞ւմ էք որ՝ այդ լուրը չարժէր դորան։

—Եւ դու պարգև ես սպասո՞ւմ դրա համար։

—Գոնէ, եթէ ձեզանից պարգև ստանամ, պատասխանեց դը-Մոնսը,—կարող էք հաւատացած լինիլ որ՝ դա գողացուած չի լինիլ։

—Խորհուրդ եմ տալի քեզ, սիրելի՛ս, սպասել մեծ պարոն Ռոբէրին, Պելոպոնէսի իշխանին։ Նա կտայ ձեզ պարգևը։

Մատիս դը-Մոնսը վերցրեց սեղանից բիւրեղեայ շիշը, լցրեց մի բաժակ գինի և ծանր խմելով ասաց.

—Ուրեմն, կեցցէ՛ Պելոպոնէսեան Ռոբէրը։ Այժմ կասեմ նոյնպէս, որպէս և ձերդ պայծառափայլութիւնը—ահա՛ որպիսի շնորհակալութիւն։ Ես թռչունի թռիչքի արագութեամբ անցնում եմ դրեթէ աշխարհի կէսը, դառնում եմ նաւաստի որ՝ ծառայեմ ձեզ, հագնում եմ—թո՛ղ Աստուած ներէ ինձ—եկեղեցու պաշտօնեայի հանդերձը, այդ օրհնած հանդերձով ենթարկւում եմ վտանգին ջրվէժ (աղբիւր) դառնալ, ինչպէս Մովսէսի ժայռը,—և փոխանակ զարմանալու իմ ճարպիկութեան և վարպետութեան վերայ, ձերդ պայծառափայլութիւնը բարեհաճում էք ծաղրել ինձ։

—Ընայելով բոլոր ցանկութեանս, ինձ շատ դժուար է, սիրելի՛ս, զարմանալ ձեր ճարպիկութեան վերայ։

—Ինչո՞ւ այդպէս դժուար է։

—Այն պատճառով, սիրելիս, որ՝ երբ Կոմս դը-Շամպլիտը գնում էր Պելոպոնէսից, դուք գնացիք նորա հետ

ո՛չ թէ նորա համար որ՝ վերադառնայիք աւետել ինձ ժառանգ նշանակելու մասին, այլ այդ նշանակելը խափանելու համար։

Երբ կոմս դը-Շամպլիտը գնում էր այստեղից, նա խոստացաւ ձեզ որ՝ եթէ մի տարի և մի օրից յետոյ նա ինքը չի վերադառնայ և չի ուղարկի մի ուրիշին իւր փոխանակ, իշխանութիւնը Պելոպոնէսի վերայ կըպատկանի ձեզ։ Ձերդ պայծառափայլութիւն, հօ չէ՞ք մոռացել այդ խօսքերը,

—Շատ լաւ յիշում եմ, անհամբերութեամբ պատասխանեց Վիլլարդուինը։—Նոյնպէս յիշում եմ որ՝ դուք գնացիք Շամպլի՝ի ետևից այն խորհրդով որ՝ ո՛չ միայն խափանէիք նորա վերադարձը, այլև ուրիշի ուղարկելը այստեղ։ Լաւ չէ՞ յիշողութիւնս։

—Հիանալի է։ Բայց լա՛ւ էք յիշում նոյնպէս թէ ե՞րբ գնաց այստեղից Շամպլիտը։

—Ցոյս ունիմ, պատասխանեց կուսակալը ժպտալով։—Եթէ չեմ սխալւում—մարտի տասներկուսին։

—Իսկ այսօ՞ր։

—Այսօր սեպտեմբերի երեսունն է։ Բայց ի՞նչ է դորանից հետևում։

—Երեսունն է, այո՛։ Եւ ձերդ պայծառափայլութիւնը կարծում է որ՝ Պելոպոնէսի գաթան այնքան անհա՞մ է որ՝ թողնում են նորան պաղել ամբողջ եօթը ամիս և ոչ ոք չէ՞ ցանկանում տեսնել նորա համը։ Եթէ իմ ճարպիկութիւնը չլինէր, որը դուք չէք ընդունում, վաղուց արդէն Պելոպոնէսը կխոնարհէր նոր իշխանին։

—Մի՞թէ Շամպլիտը այդպէս շտապում էր, գոչեց Վիլլարդուինը։ Ի՞նչ, նա վախենո՞ւմ էր որ՝ ես Մօրէն կդնէի գրպանիս մէջ։

Մատիօ դը-Մօնսը ըմպելով էլի մի բաժակ թշշան գինուց, որ պատրաստած էր Շամպանիայում, սկսեց իւր պատմութիւնը։

—Դեռ նոր էինք հասել այն երկիրը, որը տալիս է մեզ այս հիանալի գինին, երբ մի քանի նշաններ արդէն սկսեցին անհանգստացնել ինձ։ Եղբօրորդու չափազանց յարգանքը և ուշադրութիւնը դէպի հօրեղբայրը և հօրեղբօր չափազանց գգուանքը դէպի եղբօրորդին, կասկածելի թուեցան ինձ։

Վերջապէս մի անգամ ես լսեցի ինչպէս Շամպլիտը հարցնում էր Ռոբէրից թէ՝ տեսե՞լ է նա երբ և իցէ թարմ թուզի համը։ Այդտեղ ես հասկացայ որ՝ վտանգը մօտ է և համոզեցի կոմսին ամենից առաջ գնալ Փարիզ և ներկայանալ թագաւորին, իւր աւատական իշխանին։

Այդպիսով անցել էր երկու ամիս մարտի տասներկուսից յետոյ. մի ամսան էլ անցաւ պատրաստութիւնների մէջ։ Ռոբէրը կամենում էր ուղեկցել իւր հօրեղբօրը, բայց ես, գովաբանելով երիտասարդի արժանաւորութիւնները, առաջարկեցի հօրեղբօրը թողնել նորան իւր փոխանորդ իբրև ժամանակաւոր կառավարիչ Շամպանիի։ Փարիզում գործերս գնացին աւելի լաւ. այնտեղ ինձ օգնում էին պալատի գայթակղութիւնները և կոմսի սէրը դէպի զբօսանքները։ Օրերն անցնում էին բախտաւոր արագութեամբ։ Բայց մի անգամ նկատեցի որ՝ կոմսը յօրանջեց։ Ա՛հ նշան. ուրեմն նա սկսել է ձանձրանալ. չիցէ թէ յանկարծ յիշէ գործերը և ի միջի այլոց Պելոպոնէսի գործերը, մանաւանդ որ՝ եղբօրորդու բարեկամական գրութիւնները հասնում էին ամեն օր։

Պէտք էր գործ դնել ազգու դեղ։ Փիլիպպոս-Օգոստոս թագաւորի պալատականների մէջ կար մի կապուտաչեայ գեղեցկուհի. նորան յանձնեցի բժշկել կոմսին։ — Բժշկութիւնը յաջողեցաւ. կոմսը դադարեց յօրանջել, իսկ ես դադարեցի անհանգստանալուց։

— Մինչև այժմ ես քեզ նոյնն եմ տեսնում, ինչպէս ճանաչել եմ, ասաց Վիլլարդուինը։ Յետո՞յ։

— Յետո՞յ։ — Երբ ես բոլորովին հաւատացած էի թէ նաւը գնում է յաջողակ հողմով, յանկարծ տեսայ որ՝ նա թեքուեցաւ։ Այս ի՞նչ է, մտածում եմ, ո՞րտեղից է փչում քամին. ո՞ր կողմիցն է խութքը։ Առաջ մակերևոյթի վերայ ոչինչ չէր երևում։ Վերջապէս ինձ յաջողեցաւ գտնել խութքը պալատի ծառայանոցների խորքերում, դա երևեցաւ մի օտարականի կերպարանքով — յոյնի Արտայից, որ կոչւում էր, որպէս ինձ ասացին, Յօհան Նոնն։ Ոմանք համարում էին նորան իբրև հասարակ ճանապարհորդ. այլք համարում էին իբրև Եպլադայի իշխանի գաղտնի դեսպան, ուղարկուած Ֆրանսիայի թագաւորի մօտ։ Առ հասարակ նորան սակաւ էին

նկատում և նորա մասին սակաւ տեղեկութիւն ունէին։ Այնու առաւել տարօրինակ թուեցաւ ինձ կոմսի յաճախական խօսակցութիւնը նորա հետ. ես սկսեցի դիտել և շուտով նկատեցի որ՝ այդտեղ իսկ էր կարիճը։

—Այդտե՞ղ։ Ի՞նչ կարող էր լինել դա։

—Գուցէ ձերդ պայծառափայլութիւնը կօգնէք ինձ բացատրել այդ։

—Ե՞ս։ Ի՞նչպէս։

—Պետրալիֆասը, Ելլադայի իշխանի անները, այստե՞ղ է։

—Այո՛, գրեթէ մի ամիս է։ Բայց դու ի՞նչ ես եզրակացնում դորանից։

—Գուցէ նորա այցելութիւնը կապ ունի Նօնի դեսպանութեան և կոմս Շամպլիտի որոշմունքի հետ։

—Կոմսի որոշմունքի հետ՝ խլե՞լ ինձանից Մօրէի իշխանութիւնը։ Կարծեմ, դու սխալւում ես։

—Ի՞նչպէս։ Միթէ ձերդ պայծառափայլութեան յայտնի չէ՞ թէ՝ ինչո՞ւ Պետրալիֆասը եկել է Պելոպոնէս։

—Նորա ասածով՝ եկել է իւր կալուածքները տեսնելու, պատասխանեց Վիլլարդուինը։ Իսկ ինձ թւում է թէ՝ նա եկել է ամուսնացնելու նպատակով իւր թոռնուհին իմ որդի Գոդֆրիդի հետ։ Տեսնո՞ւմ ես, նորան ուրեմն աւելի ձեռնտու է պահել իմ կողմը քան թէ լինել իմ դէմ։

—Ուրեմն նա խնդրե՞ց Գոդֆրիդից ամուսնանալ իւր թոռնուհու հետ, հարցրեց Մատիօն, մտածելով։

—Ոչ բացայայտ կերպով. բայց նորա բոլոր վարմունքը այդ է ցոյց տալի։

—Ա՛խ, եթէ այդպէս է, ուրեմն ես բոլորը հասկանում եմ, գոչեց Մատիօն։

—Ի՞նչ ես հասկանում։

—Որ Պետրալիֆասը ամենախորամանկ աղուէս է, որպիսին երբևիցէ մեծացրել է Կ. Պոլսի արքունիքը։

—Նոր գիւտ չէ այդ, ժպտալով ասաց Վիլլարդուինը։ Բայց այժմ ինչի՞ց ես տեսնում այդ։

—Ինչպէս երևում է, Ելլադայի իշխանը այնպիսի մարդ չէ որ՝ պղտոր ջրի մէջ ձուկ որսայ. կարթը ձգելուց առաջ նա կամենում է իմանալ թէ՝ ինչ տեսակ ձուկ կհանէ։

Դորա համար իսկ ուղարկել է նա իւր անները որ ամենից առաջ վարպետութեամբ գնեն տեղադրութիւնը։

—Նորան հարկաւոր չէր այդքան զգուշութիւն, ասաց Վիլլարդուինը։ Իմ և Թէոդորի միջի ընտանեկան կապը շատ օգտաւէտ է Թէոդորի շահերին. երկու այդպիսի իշխանը միասին մի կայսր արժեն։

—Ի հարկէ, պատասխանեց դը-Մօնսը. բայց ձեզանից մէկը դեռ ևս իշխան չէ։ Այդ իսկ պատճառով՝ ուղարկելով այստեղ իւր անները տեղ բռնելու եթէ ձերդ պայծառափայլութիւնը կհաստատուի իշխանութեան իրաւունքի մէջ, Թէոդորը միևնոյն ժամանակ ուղարկել է Նօննին կոմս Համպլիտի մօտ տեղեկանալու թէ՝ արդեօք ձեզ վերայ կհաստատուի Մօրէի իշխանութիւնը։

—Շատ կարելի է, ասաց Վիլլարդուինը. ես ճանաչում եմ Թէոդորին, քայլը դնելուց առաջ նա շօշափում է գետինը ոտքով։

—Ահա՛ այսպէս Նօննը սկսեց ամեն տեղ ժողովել տեղեկութիւններ, ելումուտ անել, դիտել, հարցուփորձ անել, և այնքան աղմուկ յարոյց որ՝ ստիպեց կոմսին յիշել Պելոպոնէսի մասին։ Իսկ ես ամեն կերպ աշխատում էի հեռացնել նորանից այդ իսկ յիշելը։ Նօննը դուրս եկաւ ոչ յիմար մարդ, նա շուտով հոտ առաւ որ՝ քամին փչում էր Ռօքէրի կողմը և մտածեց որ՝ աւելի հեշտ էր և ապահով առագաստները քամու կողմը դարձնել, քան թէ մաքառել նորա դէմ։ Այնուհետև ես տեսայ որ՝ մենք յաղթուած էինք, և սկսեցի գործ դնել բոլոր ջանքերս ժամանակը քաշքշելու համար։ Բայց շուտով հասկացայ որ՝ այդպիսի վարմունքս կարող էր կասկածելի կացուցանել ինձ. ուստի ես փոխեցի գործողութեանս եղանակը և դարձայ եռանդուն պաշտպան Ռօքէրի շահերին։ Եւ երբ նկատեցի որ՝ նորա նշանակելը անխափանելի է, իսկոյն նամակ գրեցի նորան, բացատրեցի իմ ջանքերը նորա մասին, իմ յոյսերը, և մի քանի օրից յետոյ ստորագրեցի այն վկայականը, որը կարգում էր նորան Մօրէի իշխան։

—Դո՞ւ ստորագրեցիր։

—Բաւական չէ այդ. ես ինքս տարայ այդ վկայականը երիտասարդ Համպլիտին Բուրգոն քաղաքը, որպէս

և իւր հօրեղբօր մտերմական նամակները և հրահանգները։

—Նոցա մէջ նա յիշում էր ի հարկէ և այն խոստմունքը, որ տուել էր ինձ։

—Ո՛հ, ոչ. դորա մասին ես մոռացայ, որովհետև նամակները ես գրեցի։

—Ինչո՞ւ արդեօք, ասաց Վիլլարդուինը. միթէ նա չիմացաւ յետոյ իւր հօրեղբօրից կամ Նոննից։

—Հօրեղբօրից չէր կարող իմանալ, որովհետև կոմսը գնաց Իտալիա այն իսկ օրը, երբ ես գնացի Բուրգօն. Նոննից նոյնպէս, որովհետև ինքը Նոննը չգիտէ այդ։ Որպէս զի նորա գլխի մէջ չմտնէին աւելորդ տեղեկութիւններ, ես առաջարկեցի նորան գնալ ինձ հետ միասին Ռօբէրի մօտ, որ նա կանէր ի հարկէ և առանց իմ առաջարկութեան։

—Ռօբէրը երևի շատ շնորհակալ էր ձեզանից։

—Կարող էք ձեզ երևակայել։ Նա շինեց ինձ իւր առաջին խորհրդակիցը և երկու օր չէր անցել որ՝ նա արդէն յայտնեց ինձ Ելլադայի իշխանի առաջարկութիւնը, որը արել էր Նոննի ձեռքով։ Եւ գիտէք—ո՞րպիսի առաջարկութիւն։

—Կարելի է իշխանը առաջարկել էր իւր աղջկայ ձեռքը։

—Այո՛, այդ իսկ է։

—Եւ Ռօբէ՞ը...

—Ընդունեց առաջարկութիւնը։

—Ընդունե՞ց։

—Ի հարկէ ընդունեց, բայց պայմանով—եթէ օրիորդին կհաւանէ։

—Է՛հ, դորա մասին կասկած չէ կարող լինել։

—Եթէ դուք այդպէս էք հաւատացած որ նա կհաւանէ օրիորդին, ասաց դը-Մոնսը, աւելի վատ նորա համար։

—Ինչո՞ւ։

—Որովհետև Վլաքիայի իշխանի աղջիկը պէտք է Գոդֆրիդի կին լինի։

—Է՛հ, ի՛մ թանկագին Մատիօ, ասաց Վիլլարդուինը անմեղօրէն ժպտալով.—մենք կվերադառնանք մեր Շամպա-

նիան և կսկսենք կաղամբ բուսցնել հայրական ագարակում։ Ո՞վ կը կամենայ ազգակցիլ մեզ հետ։

—Շատ գեղեցիկ. եթէ այդպէս է, խնդրում եմ ձերդ պայծառափայլութիւնից ագարակապան կարգել ինձ։ Բայց եթէ յանկարծ, որպիսի և իցէ անակնուեալի դիպուածով դուք կմնաք Մօրէի իշխան...

—Այն ժամանակ ուրիշ բան կլինի, պատասխանեց Վիլլարդուինը։ Այն ժամանակ Աննան արժանի կլինի Գոդֆրիդի կնութեան, եթէ որևիցէ ուրիշ տեսակ դարսողութիւնները... բայց ինչու խօսենք դատարկ բաների վրայ։ Մինչև մարտի տասներկուսը մնում է կարծեմ էլի հինգ ամիս և 12 օր, այսինքն՝ այդ միջոցին Ռօբէրը կարող է գալ հինգ անգամ իւր իշխանութիւնը ստանալու համար։

—Ա՛խ, հինգ ամիսը դեռ ևս հինդ դար չէ, ասաց դը.Մոնսը։ Տեսնենք։ Դէ՛ առ այժմ մնաք բարին, ձերդ պայծառափայլութիւն։

—Ի՞նչպէս. դու արդէն գնո՞ւմ ես։ Բայց ո՞ւր։

—Ի՞նչպէս ուր։ Այնտեղ, ուր ինձ կոչում են իմ պարտաւորութիւններս։ Ես գնում եմ Մօրէի իշխանի մօտ. ես պէտք է նորա հետ լինիմ, երբ նա կգայ այստեղ ընդունել կառավարութիւնը։

—Դէ՛հ, բարի՛ ճանապարհ, սիրելիս։ Գոնեա դու ինձ զգուշացրիր յարմար ժամանակ, և ես կպատրաստուիմ ընդունել իշխանին ինչպէս վայել է։

—Առանց ամենայն կասկածի։ Բայց... որ չմոռանամ ամենագլխաւոր բանը, յանձնեցէք ինձ 8 հազար ոսկի։

—Բայց ինչո՞ւ ձեզ այդ։

—Նորին բարձրութեան, Մօրէի իշխանի ճանապարհածախք։

—Ա՛խ, ահա՛ նոր բան։ Ձեր հանճարեղ խելքով դուք մտածում էք որ՝ ես պարտաւո՞ր եմ վճարել նորա ճանապարհածախքը։

—Եւ ձերդ պայծառափայլութիւնը բոլորովին կհամաձայնուիք ինձ հետ երբ կլսէք իմ պատմութեան վերջը։ Այն օրից սկսած, երբ Ռօբէրը կարգեց ինձ իւր խորհրդակից, իմ առաջին խորհուրդն այն էր որ՝ նա պէտք է մտնի իւր նոր կալուածքի մէջ ոչ իբրև դպրոցից արտաքսած աշա-

կերտ, այլ փառաւոր և շքեղ կերպով։ Այս միտքը ընդունեցաւ ոգևորութեամբ, բայց սորա իրագործելու համար հարկաւոր էր փող։ Փոխանակ թոյլ տալու Ռոբէրին ուղարկել մի ուրիշ մարդ փող գտնելու համար, ես առաջարկեցի նորան ուղարկել ինձ իսկ Փարիզ դորա համար։ Բայց միևնոյն ժամանակ հարկաւոր էր որ՝ ձերդ պայծառափայլութիւնը նմանապէս իմանար թէ ինչ է լինում և ստանար ամեն բանի մասին շուտափոյթ և հաստատ տեղեկութիւն։ Ձեզ մօտ ուղարկելու ոչ ոք չունէի, և ես առհասարակ ոչ ոքին չեմ հաւատում բացի ինձանից։ Ահա այսպէս դուրս եկայ Բուրգօնից դէպի Փարիզ, և ուղիղ եկայ Լակեդեմոն։

—Ի՞նչպէս, միթէ դու այդպէ՞ս արիր։ Բայց Փարիզը աւելի մօտ է Շամպլիտից քան թէ Լակեդեմոնը, ասաց Վիլլարդուինը դարմացմամբ։

—Ի հարկէ աւելի մօտ է, պատասխանեց Մատիս դը-Մօնսը ծիծաղելով։ Բայց տասնևհինգ, քսան օր զանազանութիւնը մեծ բան չէ։ Բացի դորանից՝ Փարիզում որքան ժամանակ կհարկաւորէր ինձ փոխատուներ գտնելու, նոցա հետ բանագնացութիւն վարելու փոխառութեան մասին, գրաւի մասին, և Աստուած գիտէ երբ կստանայի գումարը։ Աւելացրէք դորա վերայ և այնտեղի անիծուած օդը իւր տենդով։ Իսկ այստեղ.... ես եկայ առաւօտը և գնում եմ երեկոյին, որովհետև ձերդ պայծառափայլութիւնը իսկոյն և իսկ կհամարէ ինձ ութը հաղար ոսկին։

—Դու կարծո՞ւմ ես։

—Բնաւ չեմ կասկածում։ Եթէ ես կվերադառնամ դատարկ ձեռքով, ես կ'կորցնեմ Ռոբէրի համակրութիւնը։ Իսկ Նօնը կդառնայ նորա առաջին խորհրդատուն և կուղարկէ նորան ձեզ մօտ այստեղ թեւերի վերայ։

—Դու կամենում ես գնալ այսօր երեկո՞յին։

—Ուղեկիցը սպասում է ինձ։

—Ուղեկի՞ցը։

—Այո՛, Յոհան Նօնը։

—Ի՞նչ ես ասում, սիրելի Մատիս, գոչեց Վիլլարդուինը։ Ուրեմն այդ մարդը այստե՞ղ է։

—Նոյն իսկ օրը, երբ Ռոբէրը ընդունեց Նօնի առա-

ջարկութիւնը, ես նկատեցի որ՝ նա սկսեց պատրաստուիլ ճանապարհի համար և իմացայ որ՝ նա գնում է Պետրալի-ֆասի մօտ տեղեկութիւն տալու բոլոր անցքի մասին։ Ահա այդտեղ առաջին անգամ միտք յղացաւ գլխումս գնալ Փարիզ։ Ես գնացի մինակ և հասայ Մարսէլ մի քանի ժամով առաջ Եղլադայի իշխանի դեսպանից։ Տեղեկանալով թէ ո՞ր նաւով է գնում նա, իսկոյն հասարակ նաւաստիի պաշտօնով վարձուեցայ այդ նաւի վերայ։ Յաջողակ քամին անվտանգ արագութեամբ հասցրեց մեզ մինչև Պոնտիկօ։ Այդտեղ Նոնենի հետ պատահեցաւ կերպարանափոխութիւն. նա դուրս եկաւ իւր օթևանից լեռնական հովուի հագուստով, կամ լաւ ասել՝ լեռնային արջի ձևով։ Լաւ օրինակը չէ պէտք արհամարհել. կէս ժամից յետոյ ես հագնուած էի վարդապետի շորով։ Նոնենը ճանապարհ ընկաւ և առաջին իսկ նշաններից ես նկատեցի որ՝ նա ուղևորուեցաւ դէպի Լակեդեմոն։ Ես հետևեցի նորան իբրև ստուեր և այսօր հասայ այստեղ մի երկու ժամով նորանից առաջ։ Ես գիտեմ որ՝ նա չէ կարող մնալ այստեղ մի օրից աւելի և կերթայ այսօր երեկոյին։ Ուրեմն եթէ ես կամենում եմ ձրի կատարել վերադարձս, չեմ կարող ժամանակ կորցնել։

Վիլլարդուինը բացեց իւր պահարանը, հանեց ութը քսակ ոսկով և տուեց Մատիս դը-Մոնսին։

—Բայց միտդ պահիր, ի հարկէ, որ՝ ես տալիս եմ այս գումարը փոխարինաբար։ Ես այնքան հարուստ չեմ որ այդպիսի ընծաներ տամ։

—Ի հարկէ փոխարինաբար, ասաց դը-Մոնսը. եթէ կկամենաք—այս փողը կարող է տալ ձեզ քսան տոկոսիք։

—Աստուած չանէ, գոչեց Վիլլարդուինը։ Դու ինձ ջնո՞ւտ ես համարում, ի՞նչ է։ Օրինաւոր տոկոսի՞ք, սիրելիս։ Մենք չպէտք է օր առաջ նուազացնենք իշխանի արդիւնքները։

—Օրինաւոր տոկոսիք, ահա՛ բախտ, ասաց դը-Մոնսը ձեռքերը շփելով։ Այժմ ես հաւատացած եմ որ՝ Ռոբէրը ինձ կկարգէ Պելոպոնէսի ելևմտից նախարար։

—Դէ՛հ, գնա՛ ուրեմն ստացի՛ր քո նախարարական պաշտօնը, ասաց կուսակալը։—Իսկ քեզ բան չէ՞ հարկաւոր։

—Ամենևին ոչինչ. Նօննը ծախսում է։ Մնա՛ք բարին, ձերդ պայծառափայլութիւն, և ցտեսութիւն.... Հինգ ամսից յետոյ։

Մատիօ դը-Մօնսը վերկացաւ, խնամքով ուղղեց իւր աբեղայական վերարկուն, իջեցրեց աչքերի վերայ վեղարը, և երբ բարձրացաւ վարագոյրը, նա դուրս գնաց, ինչպէս արդէն ասացինք, խորին ողջոյն մատուցանելով կուսակալին։

4

ԱՍՊԵՏԱԿԱՆ ՄԵՆԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Ամբոխը խումբ խումբ, բերանը բաց, կանգնած էր հանդիսաւոր ընթացքի առաջ, որին առաջնորդում էր Վիլլարդուինը, կամ այս կողմ այն կողմ էր քաշւում նորան ճանապարհ տալու համար և ողջունում էր բարձրաձայն կէցցէներով։ Աղաղակը սաստիկ էր, օդը թնդում էր կէցցէներից։

Ամբոխի մէջ կար մի մարդ, որ ամենից աւելի յափշտակուած էր երևում փայլուն հանդէսով։ Երբ կուսակալը իւր պալատականներով անցնում էր նորա մօտից, այդ մարդը, որ ոչ այլ ոք էր եթէ ոչ մեզ արդէն ծանօթ Հովիւը Վլաքից, սկսեց սաստիկ աղաղակել.

—Կէցցէ՛ Նորին պայծառափայլութիւնը, Պելոպոնէսի կուսակալը. կեցցէ՛ երևելի իշխան Պետրալիֆասը։

—Եւ ընդ նմին Հովիւը կատաղի կերպով շարժում էր օդի մէջ ձեռքերը, և կարծես թէ կամենալով աւելի ոյժ տալ նոցա շարժմունքին՝ զարկեց իւր կաշու գլխարկով Պետրալիֆասի ձիու ճակատին։ Խրտնած ձին բարձրացրեց առաջին երկու ոտը օդի մէջ և քիչ մնաց որ՝ դուրս նետէր թամբից իւր վերայ նստողին։

—Ա՛խ, յիմար, գոչեց ծերունին, երկու ձեռքով պինդ բռնելով թամբի գլուխը։

Բայց Հովիւը հզօր բաղուկով բռնեց ձիու սանձը և ասաց.

—Ներեցէ՛ք, պայծառափայլ տէր ներեցէք. ես ոչ թէ

դիտամբ, այլ անզգուշաբար։ Ես մի աղքատ հովիւ եմ Վլաքից։ Ներեցէ՞ք ինձ, տէ՛ր։

—Կորցրէ՛ք այդ լիրքը, հրամայեց Վիլլարդուինը։

Զինուորները մօտ վազեցին արդէն, որ հրամանը կատարեն, բայց հովիւը բռնելով Պետրալիֆասի ձեռքը՝ շարունակում էր ներողութիւն խնդրել նորանից։ Ամբոխի մէջ լսւում էր ծիծաղ և շշուկ։ Ցանկարծ Պետրալիֆասը զգաց որ իւր ձեռքի մէջ դնում են մի նամակ. նա ուշադրութեամբ նայեց հովուի վերայ։

—Դա օտարական է, իմ հայրենիքից, ասաց Պետրալիֆասը Վիլլարդուինին։ Մեր վլաքները դեռ ևս շատ անտաշ են. ներեցէ՛ք դորան իմ սիրոյ համար- դա յաւիշտակուել էր աւելորդ եռանդով։ Թոյլ տուէք ինձ ներս տանեմ դորան կրկէսը։

—Ինչպէս կամենում էք, պատասխանեց կուսակալը։

Եւ օգուտ քաղելով բոպէից, երբ ոչ ոք չէր նայում նորա վերայ, Վիլլարդուինը նայեց հովուի վերայ երկար և զննող հայեացքով։

Այդպէս հովիւը միացաւ հանդիսաւոր ընթացքի հետ, որով և շարժեց մեծ նախանձ ընիկների մէջ, որոնք փոքր ինչ առաջ խօսում էին նորա հետ և ամենևին չէին սպասում, որ այդ օտարականը նոցանից յաղթող հանդիսանար։ Բայց լեռնականը ոչինչ ուշադրութիւն չդարձնելով իւր վերայ ամեն կողմից թափած ծաղրանքին, մտաւ կրկէսը Պետրալիֆասի ետևից։

Այդ ահագին շինութիւնը ներսից զարդարուած էր ծիրանի և թանկագին վարագոյրներով։ Նստարանները լի էին զարդարուն, ոգևորուած բազմութեամբ։ Միայն մի օթևանը, ամենաբարձրը ամփիթէատրոնում և զարդարուածը շքեղ կերպով, մնում էր դատարկ։ Այժմ և դա լցուեցաւ կուսակալի շքեղազարդ պալատականներով։

Շուտով կրկէսի դուռը փակուեցաւ։ Երկու ծայրում տեղաւորուեցան մարաջախտները կարգը պահպանելու համար։ Կրկէսի մէջ տեղը դուրս եկան զարդարած ձիերով երկու յայտարարողներ. նոքա կարդացին բարձր ձայնով ասպետական մենամարտութեան կանոնները, ուշադրութիւն խնդրեցին հանդիսատեսներից և յայտարարելով—սէ՛ր առ

կանայս, պատի՛ւ քաջ ասպետներին, նշան տուին փողերի հնչմունքներով, որ մենամարտութիւնը սկսւում է։

Իսկոյն մինը մեսի ետևից, երկար շարքով, սկսեցին հրապարակ դուրս գալ երևելի բարձոնները, որոնք բաժանել էին Պելոպոնէսում Բիւզանդեան կայսրութեան մնացորդները։ Ամենից առաջ ընթանում էր Վիլլարդուինի որդին։

Գոդֆրիդի ոսկեզօծ զէնք ու զրահը փայլում էր նորա ծիրանի և ոսկեթելով բանուած վերարկուի ծալքերի տակից։ Նորա սաղաւարտը զարդարուած էր ծիրանի փետուրով. առաջի կողմի վերայ ձևանում էր նիզակ, որի սուր ծայրը հասնում էր ամպերին։

Փայլուն ասպետը վեհ հպարտութեամբ անցաւ հրապարակը, մօտեցաւ կուսակալի օթևանին, իջեցրեց նիզակը և ազնուութեամբ գլուխ տուեց կանանց և իւր հօր։ Յետոյ բռնեց առաջին տեղը, որ նշանակած էր մենամարտողների համար։

Ամենից յետոյ հրապարակ դուրս եկաւ Աթէնքի իշխանի դեսպանը, Գոտիէն։ Նորանից առաջ մտնող ասպետները արդէն շարժում էին գովաբանութեան շշուկներ. բայց այդ փառաւոր և փայլուն ասպետի երևալը յարոյց ընդհանուր ոգևորուած աղաղակներ։ Ամենքը տեսան, որ նորա վերարկուի վերայ, որ ծածկում էր ձիւնի պէս փայլող արծաթի զրահը, կային շինած Աննայի տոհմական նշանակի ծաղիկները։ Վերարկուն կապտագոյն էր և զարդարած արծաթի աստղիկներով. սաղաւարտի փետուրները նոյնպէս կապտագոյն էին և առաջի կողմի վերայ փայլում էր ադամանդեայ աստղ այս նշանաբանով.

«Նորան (Աննային) միայն, որ փա՛յլում է աւելի պայծառ քան թէ հազարաւոր աստղեր»։

Պողպատի սաղաւարտի տակից փռւում էին շքեղ բարձոնի ուսերի վերայ խիտ ոսկեգոյն գանգուրները։ Երբ սրնթաց անցնելով հրապարակը, Գոտիէն հասաւ կուսակալի օթևանին, նա յանկարծ իւր ձին կանգնացրեց այնպէս որ՝ դա առաջին ոտներով ծունկ չոքեց, իսկ ինքը ասպետը կիրթ քաղաքավարութեամբ գլուխ տուեց կանանց։ Աննան շառագունուելով, պատասխանեց նորա ողջունին գլուխը

թեթև խոնարհեցնելով, և ամբողջ ամփիթեատրոնը դղրդաց ծափահարութիւնից։

Ասպետները շարուեցան կրկէսի պատի տակը երկու կողմից, ազատ թողնելով բոլոր մէջտեղի տարածութիւնը։ Երբ որ ամենքը տեղաւորուեցան իւրեանց տեղերում, նշան տրուեցաւ մենամարտութեան սկզբին։

Մենք չենք կամենում նկարագրել այստեղ մենամարտութեան զանազան երևոյթները, մենամարտողների հմտութիւնը և քաջութիւնը, նոցա շարժուածքների գեղեցկութիւնը և արագութիւնը, նոցա միմեանց հանդիպելու եռանդը, որք ազդու տպաւորութիւն էին գործում հանդիսականների վերայ։

Վիլլարդուինի որդին, որ շատ հմուտ էր զինուորական արուեստի մէջ, մենամարտում էր առաջ մէկը մէկի դէմ երեք հակառակորդների հետ — Գոտիէ դը-Ռոնշէրի, Պատրասի բարոն Վիլհէլմ Ալեմանի և Գիւի դը-Նիվելէի հետ։ Առաջին ասպետին Գոդֆրիդը զինաթափ արեց, երկրորդի երկու նիզակը կոտրեց, իսկ երրորդին դուրս նետեց թամբից։

Բայց յաղթողը ստիպուած էր նահանջել եռանդուն և յաղթական Հիւգո դը-Բրիէրի առաջև։ Այս նոր մենամարտողը հետզհետէ յաղթեց Գոդֆրիդին, Հիւգո Վիլլացուն և երիտասարդ բարոն Լիւկասին։ Բայց դը-Բրիէրի քաջութիւնը պէտք է նահանջէր Ռաուլ դը-Տուրնէի հարուածի ճշտութեան առաջև։

Բայց հաղիւ թէ յայտարարած էր վերջին յաղթողի յաջողութիւնը, ահա սպառնացող և գոռոզ դէմքով նորա դէմ դուրս եկաւ, նորա մշտական թշնամին — Բարոն Ռոբէրտ դը-Լա-Տրէմուալ։ Սակայն այս անգամ նորա գոռոզութիւնը կոտրուեցաւ և ստորացաւ Ռաուլի հանդարտ հմտութիւնով։ Հանդիսականները բաւականութեամբ նայում էին թէ ինչպէս մեծամիտ և ինքնահաւան Լա-Տրէմուալը, ստորութեամբ խայտառակուեցաւ հակառակորդից, որին ամենքը սիրում էին նորա հեզութեան և պարզութեան համար։

Ցաղթուած Ռոբէրտից յետոյ առաջ եկաւ Ժան դը-Նէյիլի։ Երեք-չորս քայլ առաջ գնելով, նա տեսաւ որ՝ իւր հակառակորդը սաստիկ թուլացել է իւր յաղթութիւնն-

ըից յետոյ, և քաղաքավարութեամբ խոնարհեցրեց իւր նիզակը Ռաուլի առաջև, չկամենալով օգուտ քաղել յաջողակ հանգամանքից, թէպէտև իրաւունք ունէր առ այն։ Դը-Նէյիլին սպասում էր մինչև որ Ռաուլը բոլորովին հանգըստացաւ։ Պետրալիֆասը, օգուտ քաղելով այդպիսի ընդմիջումից, կամեցաւ փոքր ինչ շարժողութիւն տալ իւր զառամեալ և թուլացած յօդուածներին և դուրս գնաց կուսակալի օթևանից։ Վիլլարդուինը նկատեց որ հովիւը իրբ միամտաբար հետևեց Պետրալիֆասին։

Ռաուլի յոգնած ձեռքը չէր կարող երկար ընդդիմանալ Բարոն դը-Նէյիլի թարմ ուժին, որ նման էր անշարժ ժայռի և նա նահանջեց։

Վերջապէս հանդէս դուրս եկաւ մենամարտողներից վերջին ասպետը, երիտասարդ Գոտիէն։ Եթէ հանդիսականների բոլոր հայեացքները, բոլոր ուշադրութիւնը դարձրած չլինէր այդ մենամարտութեան վերայ, ուր ամենաքաջ մենամարտողների դէմ դուրս էր եկել ամենագեղեցիկ և նազելի հակառակորդը, շատերը կարող էին նկատել որ Աննան յանկարծ գունատուեցաւ։

Մարտը շարունակւում էր երկար. Գոտիէն ցոյց տուեց որ՝ նազելութիւնը ամենևին արգելք չէ քաջութեան և թեթևաշարժութեան։ Վերջապէս, մենամարտողները նետուեցան միմեանց վերայ. նոցա երիվարների զրահապատ կուրծքերը զարնուեցան շառաչիւնով և յետոյ նստեցան ետևի ոտների վերայ։ Բարոն դը- Նէյիլին դէպի առաջ թեքուեցաւ որ՝ վերջին հարուածը տայ Գոտիէին, որով և կվերջանար նոցա մարտը, բայց Գոտիէն օձի ճարպիկութեամբ խոյս տուեց հարուածից և թեթև կերպով հպելով նիզակով հակառակորդին, որ խիստ շատ էր թեքուել, դուրս նետեց նորան թամբից։

Կատաղի ծափահարութիւններ, ոգևորուած աղաղակներ հնչեցին ամբողջ ամփիթեատրից։ Աննայի այտերը վառուեցան. դողդոջուն ձեռքով վերցրեց նա արծաթի աստղերից հիւսած պսակը և մեկնեց այն յաղթողին։ Գոտիէն, շնորհակալութիւն յայտնելով ձեռքի շարժմունքով ծափահարող հասարակութեան, մօտենում էր արդէն կուսակալի օթևանին մրցանակը ստանալու համար, որը

քաղցր էր նորան մանաւանդ որ՝ տալիս էր այնպիսի հրաշալի ձեռքը։

Ցանկարծ վերստին հնչեց փողի ձայնը։

Բոլորի հայեացքները զարմացմամբ ուղղուեցան դէպի դուռը։ Հրապարակ էր մտնում մի անյայտ ասպետ։ Երեսածածկը փակում էր նորա երեսը, ձին սևաթոյր էր, նա ինքն հագուած էր սև շորերով։ Նորա վերայ չէր երևում ոչինչ զարդ, ոչինչ նշան։

Այդ նոր մենամարտողի անակնկալ երևալը շարժեց ամփիթեատրում մի քրթմնջուն, որ նման էր մրրկից օրօրուած անտառի ձայնին։ Գոտիէն դարձաւ նորա կողմը և սպասում էր։ Սև ասպետը կանգ առաւ հրապարակի մէջտեղ և մնաց անշարժ։ Գոտիէն մօտեցաւ նորան։

—Ասպետական օրէնքներն, ասաց Գոտիէն, պատուիրում են մենամարտողին հրապարակ դուրս գալիս բաց անել երեսը, կամ գոնէ ներկայացնել որևիցէ նշան, իւր ազնուական ծագման։ Իսկ իմ սեփհական կանոնն է—երբէք չհրաժարուել ինձ առաջարկած մենամարտութիւնից։ Եթէ դուք անպատճառ ցանկանում էք անյայտ մնալ, ասպե՛տ, ես յարգում եմ ձեր ցանկութիւնը և պատրաստ եմ մարտ մտնել ձեզ հետ։

Մարտը սկսուեցաւ։ Հակառակորդների հանդիպումն շարժեց հանդիսականների մէջ զանազան զգացմունքներ։ Գոտիէն դեռ երբէք չէր ցուցած այնչափ նաղելիութիւն շարժմունքների մէջ, այնչափ ճարպիկութիւն զինախաղութեան մէջ. կարելի էր կարծել որ՝ մի որևիցէ զարմանալի մեքենայ կառավարում էր ձիուն և նորա հեծեալին իւրեանց յաջողակ շարժմունքների մէջ։ Գոտիէի նիզակը խաղում էր ձեռքում իբրև մի ճկուն եղէգն։ Այդ նաղելի ասպետի ամեն մէկ քայլից յետոյ, ամեն մէկ զարկից յետոյ, զարմանքի ձայներ էին շարժւում գործին հմուտ մարդոց մէջ։ Սև ասպետը, ընդհակառակն, առաջին քայլից ցոյց տուեց այնպիսի անհմտութիւն, այնպիսի անփորձութիւն այդ ազնիւ վարժողութիւնների մէջ որ՝ ոմանց մէջ ծիծաղ շարժեց, այլոց մէջ անհամբերութիւն։ Շատերը սաստիկ արտնջում էին որ՝ այդպիսի անփորձ մենամարտողը համարձակուեցաւ դուրս գալ ասպետներից լաւագոյնի դէմ։

Բայց եթէ խորհրդաւոր ասպետին պակաս էր նազելիութիւնը և ճարպիկութիւնը, որ հարկաւոր են այդպիսի վարժողութիւնների համար, նա վարձատրում էր բոլոր այդ պակասութիւնները անօրինակ ուժով և զարմանալի քաջութեամբ։ Փոխանակ պաշտպանուելու Գոտիէի յաջողակ յարձակմունքներից հաշուած խուսափմունքներով, սև ասպետը, ինչպէս կատաղած նետւում էր հակառակորդի վերայ ոչինչ ուշադրութիւն չդարձնելով հարուածներին, որ զարմանալի արագութեամբ թափւում էին նորա վերայ։ Նա ցանկանում էր մարտ մտնել նորա հետ առանց զէնքի, նա հասկանում էր որ՝ միայն ուժով, և ոչ թէ ճարպիկութեամբ կարող էր ձեռք բերել յաղթութիւնը։ Բայց որ կողմ և դառնում էր խորհրդաւոր ասպետը, ամեն տեղ հանդիպում էր Գոտիէի նիզակին, որ կարծես թէ հազարաւոր կախարդական շրջաններ էր բոլորում նորա չորս կողմը։ Վերջապէս սև ասպետը, իբրև առիւծ, որ զգում է թէ կռիւ է մտել հզօր թշնամու հետ, դողալով կատաղութիւնից, պատրաստ աւելի շուտով մեռնել քան թէ անձնատուր լինել յաղթուած, երկու քայլ նահանջեց և մոլեգնաբար նետուեցաւ Գոտիէի նիզակի վերայ։ Նիզակն իբրև մի եղեգն փշրուեցաւ եռանդուն անծանօթի կուրծքի վերայ։ Այն ժամանակ ձգելով իւր նիզակը, սև ասպետը յարձակուեցաւ երիտասարդ ասպետի վերայ, բռնեց նորան իւր երկաթի ձեռքերով, հանեց թամբից և ձգեց գետնին։ Գոտիէն ընկած էր անուշ և կարծես թէ անշունչ։

Հանդիսականների մէջ լսուեցան սարսափելի գոչիւններ, բայց դոցա բոլորին ծածկեց մի սոսկալի, յուսահատական ճիչ, որ հնչեց Վիլլարդուինը օթևանից։ Աննան ուշագնաց ընկաւ կուսակալի կնոջ ձեռքերի վերայ։ Արծաթի պսակը, որ բռնած ունէր յաղթողին յանձնելու համար, ընկաւ ձեռքից և թաւալուեցաւ հողի մէջ։ Սև ասպետը դարձաւ դէպի օթևանը և մի վայրկեան նայում էր այն կողմ։ Բայց փոխանակ վերցնելու գետնից պսակը, որ իրաւունքով, նորան էր պատկանում, խորհրդաւոր մենամարտողը ձիու գլուխը դարձրեց և դուրս վազեց կրկէսից։ Ոչ ոք չէր կարողանում ասել ո՞րտեղից եկաւ նա և ո՞ւր անյայտացաւ....

Այսպէս մենամարտութեան հանդէսը վերջացաւ ընդհանուր շփոթութիւնով. ոմանք աշխատում էին ուշի բերել Գոտիէին, այլք խռնւում էին Աննայի շորս կողմը։ Ամենքը խօսում էին խորհրդաւոր ասպետի վերայ։

5

ՀԵԼԼԷՆ ԵՒ ՖՐԱՆԿ

Միւնոյն օրը երեկոյին Առիւծ Խամարէթը, մռայլ և վրդովուած, քայլում էր յետ ու առաջ իւր սենեակի մէջ։ Առաւօտեան անցքը յայտնի էր բոլոր քաղաքին և ամեն տեղ խօսում էին սև ասպետի երևալու, Գոտիէի յաղթուելու և Աննայի ուշագնացութեան վերայ։ Ի հարկէ՝ այդ բոլոր պատմութիւնները չափազանցրած էին զանազան կերպով, ոմանք մինչև անգամ ասում էին թէ՝ Գոտիէն մեռել է, իսկ միւսները հաւատացնում էին թէ՝ մեռել է Աննան։

Զարմանալի չէ, եթէ՝ այդ բոլոր լուրերը հասան և Խամարէթին և շփոթեցին նորան։ Նա տարուբերուում էր երկու զգացմունքի մէջ — մէկը քարշում էր նորան գնալ Պետրալիֆասի մօտ և տեղեկանալ Աննայի առողջութեան մասին. միւսը, լի՛ հպարտութեամբ և դառնութեամբ, պահում էր նորան։ Վերջապէս՝ երկար մաքառումից յետոյ, Առիւծը ընտրեց առաջին որոշմունքը. երկու անգամ ելաւ նա տանից և երկու անգամ վերադարձաւ։ Յետոյ ելաւ և գնաց դէպի ծերունի յոյնի տունը։ Պետրալիֆասը նստած էր պարտիզում Աննայի հետ, նարնջենու ստուերի տակ։

Խամարէթը մտաւ մռայլ, գրեթէ գաղտնական դէմքով։ Բայց երբ տեսաւ մատաղահաս օրիորդի աչքերը լացած, երեսը դեղնած, և վշտից կնճռոտած դէմքը, նա մեղմացաւ և նորա խստութիւնը տեղի տուեց ցաւակցութեան։ Խամարէթը մերձեցաւ Պետրալիֆասին և ցածիկ ձայնով ասաց թէ՝ լսելով Աննայի տկարութիւնը եկել է տեղեկանալու թէ ի՞նչ է պատահել նորան։

Աննան շնորհակալութիւն յայտնեց նորան հայեացքով։

—Նա լաւացաւ, բայց տակաւին հիւանդ է։ Սև աս-

պետի երևալը սարսափելի ազդեցութիւն գործեց նորա վերայ։

—Սև ասպետի, զարմացմամբ ասաց Խամարէթը։

—Ո՛չ, պատասխանեց Աննան, հաւատացնում եմ ձեզ—շոքը, ծանր հոտը...

—Ես չեմ սխալւում, ասաց Պետրալիֆասը. երբեմն մենք ենթարկւում ենք անբացատրելի զգացմունքներին։ Ես գիտում էի քեզ։ Հէնց որ երևեցաւ այդ խորհրդաւոր մենամարտողը, յանկարծ երեսդ բոլորովին գունատուեցաւ. աչքերդ, երբև շղթայած, հետևում էին նորա ամեն մէկ շարժմունքին։ Երբ նա յաղթեց, ես նկատեցի որ՝ վրդովմունքը, որ նա շարժեց քո մէջ, սպառեցին քո ոյժերը։

—Բայց, գուցէ զգացմունքը դէպի թամբից դուրս նետած ասպետը...։ Եթէ այդպէս է, ձեր վրդովմունքը ի զուր էր. ասպետը կենդանի է և առողջ և բոլորովին լաւացել է իւր ընկնելուց յետոյ։

—Ա՛խ, բոլորովին լաւացե՞լ է, գոչեց Աննան, կարմրելով։ Յետոյ աւելացրեց—յիրաւի՞, մեր կանացի թոյլ ջղերը չեն կարող դիմանալ այդպիսի տեսարաններին։

Խամարէթը նայեց նորա վերայ երկար, զննող աչքով. նորա հայեացքից մատաղահաս օրիորդը խոնարհեցրեց աչքերը։ Առիւծը վեր կացաւ և կամենում էր գնալ։

—Ի՞նչպէս, որդիս, դուք այդպէս շուտով գնո՞ւմ էք, ասաց Պետրալիֆասը բռնելով նորա ձեռքը։

—Ես լսեցի, ասաց լակեդեմոնացին շեշտով, որի մէջ լսւում էր ծաղրանք, որ Աննայի ցաւակցութիւնը դէպի յաղթուածը և ատելութիւնը դէպի յաղթողը շատ վնասել են նորա առողջութեան։ Այժմ, բարեբախտաբար, տեսնում եմ որ՝ ասպետի լաւանալու լուրը վերստին վարդեր բացեց նորա այտերի վերայ։ Գնում եմ ձեր մօտից բոլորովին հանգստացած։

Այդ միջոցին մտաւ ծառան և յայտնեց կուսակալի գալուստը։

Պետրալիֆասը շտապով գնաց տուն, խնդրելով Խամարէթից սպասել, որովհետև գործ ունէր նորա հետ խօսելու Վիլլարդուինի գնալուց յետոյ։ Ընդունելով կուսակալին, Պետրալիֆասը տարաւ նորան ամենաշքեղ սենեակը։

—Ասացէք խնդրեմ, ասաց Վիլլարդուինը, ի՞նչպէս է գեղեցիկ Աննայի առողջութիւնը։ Ես անհամբերութեամբ ցանկանում եմ իմանալ այդ։ Զապէլը ասաց ինձ որ՝ թողել է Նորան տակաւին շատ թոյլ դրութեան մէջ։

—Նորին պայծառափայլութիւնը, պատասխանեց Պետրալիֆասը, ցուցեց իմ թոռնուհուն կատարեալ մայրական կարեկցութիւն։ Սկզբում մենք յիրաւի վախեցանք, բայց այժմ Աննան գրեթէ բոլորովին առողջ է։

—Նա վախեցաւ սև ասպետից, և ոչ ի զուր. Նորա երևալը շատ անակնկալ էր և անվայել, իսկ շարժմունքները շատ կոպիտ։

—Ինձ թւում է որ՝ Աննայի վերայ ամենից աւելի ներգործեց այն ծածուկ և խորհրդաւոր դրութիւնը, որը բռնել էր ասպետը։ Ձերդ պայծառափայլութեան գուցէ յայտնի է—ո՞վ էր թագնուած այն սև երեսածածկի տակը։

—Հակառակորդը չպահանջեց որ՝ նա բաց անէր երեսը, իսկ դորանից յետոյ ես իրաւունք չունիմ պահանջել գաղտնիքի յայտնելը։ Մենամարտողների ցուցակի մէջ նա պատուիրել էր գրել իւր անունը սեւ ասպետ։ Ով և լինէր նա, մենք պիտի խոստովանուենք որ՝ նա անվեհեր էր, և եթէ ընտել չէր ասպետական մենամարտութիւններին, յամենայն դէպս երևում էր որ՝ մօտ ծանօթ էր գինուորական գործին։ Դուք այսօր միայն առաջին անգամ տեսաք այդպիսի հանդէս. ի՞նչպէս հաւանեցիք։

—Այդպիսի հանդէսները ինձ թւում են բոլորովին արժանի աշխարհիս ամենաքաջ ազգին, շողոքորթութեամբ պատասխանեց ծերունին։ Դա տաքացրեց ծերութիւնից պաղած արիւնս և զարթեցրեց սրտիս մէջ երիտասարդութեանը յիշատակները։

—Իսկ իմ մէջ, իմ պատուական բարեկամ, հանդէսը շարժեց աւելի քաղցր յիշատակներ. դա յիշեցրեց ինձ իմ թանկագին հայրենիքս, ես ներկայացրի ինձ Շամպայնի ազնիւ ասպետների մէջ. ինձ թւում էր որ՝ ես նորից տեսնում էի աչքիս առաջև հայրենիքիս և՛ անտառները, և՛ դաշտերը, և՛ սիրելի դէմքերը, որք ժպտում էին ինձ ծերնուելուս օրը, և՛ տունը, ուր խաղում էի մանկութեանս ժամանակ։ Պատերազմների և վրդովմունքների մէջ անցու-

ցած կեանքից յետոյ մենք ափսոսալով յիշում ենք մեր մատաղ հասակի խաղաղ տեսարանները։ Այդ ժամանակ հեռուից ժպտում է մեզ հայրական տան սիրելի տեսարանը, մենք երազում ենք տերևախիտ և ստուերաւոր ծառը, որի ստուերում մենք խաղում էինք, և վճիտ գետը, ուր մենք գնում էինք լողանալու։ Այդպիսի յիշատակների ժամանակ մեզ պատում է մի անյաղթելի ցանկութիւն—դնել թափառական ցուպը այն անկիւնում, որտեղից վերցրել ես նորան մի ժամանակ։ Ես զգում եմ, տէր իմ Պետրալիֆաս, որ՝ կեանքի երեկոյին մենք ձգտում ենք դէպի այն յարկը, որտեղից դուրս ենք եկել առաւօտը։ Այո բոպէիս ես միայն մի փափագ ունիմ—վերադառնալ Ֆրանսիա և փորել գերեզմանս նոյն ծառի տակ, ուր է և հօրս գերեզմանը։

—Էհէ, մտածեց Պետրալիֆասը, ի՞նչ է նշանակում այս բանաստեղծութիւնը. չլինի՞ թէ և սորան հասել է որ և իցէ տեղեկութիւն։

Ցետոյ գաղտուկ ձգելով Վիլլարդուինի վերայ մի զընողջ հայեացք, ծերունին ասաց.

—Բայց, երևի Աստուած չի կատարի ձեր ցանկութիւնը, որովհետև ամբողջ Պելոպոնէսը խնդրում է Նորանից բոլորովին ուրիշ բան։ Ձեր ներկայութիւնը դեռ և ս շատ երկար հարկաւոր է այս երկրի բարօրութեան համար։

Վիլլարդուինը երևի թէ չլսեց այդ շողոքորթող խօսքերը, որովհետև փոխելով խօսակցութիւնը նա հարցրեց.

—Իսկ ձեր հայրենակի՞ցը, ի՞նչ եղաւ նա։

—Իմ հայրենակի՞ցը, ասաց Պետրալիֆասը շփոթուած, ի՞նչ հայրենակից։

—Այն, որ դուք ներս տարաք կրկէսը։

—Ա՛խ, դուք չէք մոռացել նորան. նա մի խեղճ հովիւ է Վլաքից, Ցետունեան լեռների բնակիչ։

—Բարի՞ լուրեր է բերել ձեզ ձեր իշխանի մասին։

—Լո՞ւրեր... իշխանի մասի՞ն... նա չէ բերել ինձ ոչինչ լուր։

—Ա՛, ուրեմն նա ոչինչ լուր չէ բերել ձեզ, իսկ ես կարծում էի թէ բերել է։

—Եւ ոչ մի փոքրիկ լուր։ Ես նորան բոլորովին չէի էլ ճանաչում մինչև այսօր։ Ես տեսայ որ՝ նա այստեղ օտա-

բական էր, իմ Հայրենիքից, և ես ցանկացայ ներս տանել նորան կրկէսը։

—Եւ շատ լաւ արիք։

Ցետոյ Վիլլարդուինը նայելով իւր չորս կողմը, կարծես թէ կամենում էր ստուգել թէ արդեօք մի լսող չկայ, ցածացրեց ձայնը։

—Ես գիտեմ ձեր փորձառութիւնը և իմաստութիւնը, սկսեց նա, և ես ցանկանում եմ խորհրդակցել ձեզ հետ մի գործի մասին, որ շատ մեծ նշանակութիւն ունի ինձ համար։

Զնայելով իւր հմտութեան ծածկել այն, թէ. որ ըզգում էր, ծերունի պալատականը, լսելով այդ խօսքերը, չկարողացաւ զսպել իւր շրթունքների ջղային շարժողութիւնը։

—Պատրաստ եմ ձեզ ծառայել, ձերդ պայծառափայլութիւն, պատասխանեց նա։

—Ես իմացայ, շարունակեց Վիլլարդուինը, որ՝ Ամէնքի իշխանը մտադիր է առաջարկել իմ որդի Գոդֆրիդին ամուսնանալ իւր եղբօր աղջիկ Հեղինէի հետ։ Ի՞նչ խորհուրդ կտաք. համաձայնուե՞մ նորա առաջարկութեան թէ ոչ։ Ես կկատարեմ բոլորը, ինչ որ ձեր փորձառութիւնը կթելադրէ ինձ։

—Ամէնքի իշխանը, ասաց Պետրալիֆասը, խորը ներշնչելով օդը ինչպէս մի մարդ, որ ազատուել է ներքին ծանր բեռից, և իւր դէմքին տալով ամենախորամիտ կերպարանք, ասաց.

Այդ գործի մասին հարկաւոր է մտածել խորունկ։ Այո՛, Թէբան և Ամէնքը ձեր տան բանալիներն են, և իմ կարծիքով ձեզ համար օգտակար է որ՝ այդ բանալիները լինին բարեկամի ձեռքում, և աւելի լաւ է ազգականի ձեռքում։ Միանալ նորա հետ, ով որ կարող է լինել միշտ ձեզ օգտակար պատնէշ, կլինի իմ աչքին շատ խելացի և նպատակայարմար ձեր կողմից։

—Դուք այդպէ՞ս էք կարծում, ասաց Վիլլարդուինը։ Շնորհակալ եմ խորհրդի համար. ես այդ չեմ մոռանայ, երբ հարկաւոր կլինի։ Ասացէք ձեր նազելի Աննային որ՝ նորա առողջանալը շատ ուրախացնում է ինձ։

Եւ Վիլլարդուինը, գլուխ տալով ծերունուն, դուրս գնաց։ Անցնելով տան շէմքը, նա ասաց ինքն իրան.

—Ուրեմն այն հովիւը Վլաքից ոչ այլ ոք էր եթէ ոչ Նոննը։

6

ՍԵՒ ԱՍՊԵՏ

Պետրալիֆասի հեռանալուց յետոյ Խամարէթը ստիպուած էր մնալ Աննայի հետ միայնակ. նա առաջ գնաց մի քանի քայլ և թիկն տուեց ծառին, օրիորդի հանդէպ։

—Ասպետակոն մենամարտութիւնը տեսնելուց յետոյ՝ մնո՞ւմ էք դուք արդեօք հաստատ ձեր նախկին կարծիքի մէջ այդպիսի մենամարտութիւնների մասին, հարցրեց չքնաղ յոյնուհին, անվստահութեամբ նայելով Խամարէթին։

—Տեսնելուց յետոյ աւելի ևս պնդում եմ իմ կարծիքի վերայ։

—Ի՞նչպէս, դուք կամենում էք հաւատացնել ինձ որ՝ քաջութեան այդ ազնիւ արտայայտութիւնը չշարժեց ձեր սիրտը։

—Քաջութի՞ւն, ասաց Խամարէթը։ Ասպետներից ամենափառաւորը ունի այդ գեղեցիկ յատկութիւնը աւելի քիչ, քան թէ անտառի գայլը կամ լեռնաբնակ արջը։ Քաջութի՞ւն։ Բայց արժէ՞ արդեօք հանդիսաւոր կերպով ցոյց տալ այդ յատկութիւնը։

—Ա՜խ, ես չեմ կարող ներել ձեզ այդ, պատասխանեց Աննան ժպտալով։ Ես հասկանում եմ որ՝ դուք պատերազմում էք քաջերի հետ,—այդ ձեր գործն է, բայց որ՝ դուք յարձակւում էք նոյն իսկ քաջութեան վերայ...

—Երբ մարդս պաշտպանում է այն յարկը, որի տակ ծընուել է, երբ նա պաշտպանում է կնոջը, որ տուել է նորան Աստուած, երբ պատերազմում է հայրենիքի համար օտար յափշտակողների դէմ, այն ժամանակ քաջութիւնը ազնուանում է, որպէս և այն չնչին մետաղը, որ գործիք է լինում (զէնք) նորան։

—Բայց այն սև ասպետը, ասաց Աննան խորամանկութեամբ նայելով Խամարէթին, այն ասպետը, որ յաղթեց այսօր քաջերից քաջագունին, երևի համաձայն չէ ձեր կարծիքի հետ։

—Ընդհակառակն, պատասխանեց Խամարէթը, նա կարծում է բոլորովին այնպէս, ինչպէս որ և ես։

—Գուցէ և ուղիղ է ձեր ասածը, ասաց Աննան։ Ինձ ասացին որ՝ նա իբր գնացել է մինչև անգամ չարժանացնելով վերցնել պսակը, որը նա ստացել էր արժանապէս, և չպահանջելով իւր հակառակորդից ձին և զէնքը, թէև իրաւունք ունէր իւր քաջութեան յաղթանակ կազմել նոցանից։

—Նա երևի մտածեց, ասաց Խամարէթը, որ՝ չարժէր վերցնել փոշու մէջ թաւալուած պսակը և նա ամենևին չէր ցանկանում զարդարուել թատերական յաղթանակներով։

—Դուք խօսում էք նորա մասին, ասաց Աննան աղդու ժպիտով, այնպէս որ՝ կարծես թէ ճանաչում էք այդ խորհրդաւոր ասպետին։ Չէ՞ք կարող արդեօք մի բան ասել մեզ նորա մասին։

—Այո՛, ես ճանաչում եմ, ճանաչում եմ նորան, պատասխանեց լակեդեմոնացին։ Իմ շրթունքներս դեռ երբէք սուտ չեն արտասանել, իսկ իմ անխոհեմ սիրտս չէ կամենում ծածկել ձեզանից և՛ ոչինչ։ Դուք գիտէք իմ կարծիքը այդ հանդէսների մասին և ինձ չէք մեղադրի պարծեցողութեան մէջ, եթէ ես ասեմ որ՝ սև ասպետը յիրաւի ես եմ։ Հաւատացէք ինձ, այս ասելով ամօթից կարմրում եմ։

—Ո՛րպիսի պերճ խօսքեր էք ասում դուք. կարմրում էք։ Ես բոլորովին չեմ հասկանում թէ ի՞նչպէս կարող էք դուք խօսել ամօթի մասին այդպիսի դէպքերում։

—Ծաղրեցէք ինձ, ատեցէք ինձ, ասաց Առիւծը դառնութեամբ։ Ես ինքս ինձ ատում եմ։ Երբ լսեցի ձեր հրճուանքը այդ հանդէսների առիթով, ձեր զարմանքը դէպի նոցա մէջ մասնակցող ասպետները, երբ տեսայ որ՝ դուք պարգև էք բաժանում այդ օտարականներին քաջութեան համար, որպիսի պարգևը բացասում էք տալ ձեր հայրենակիցներին, մի զարմանալի, մի ծիծաղելի անձնասիրութիւն, չեմ թագցնում—մինչև անգամ մի նախանձ մտաւ

արտիս մէջ և ես անձնատուր եղայ այդ տղայական զգացմունքին և դուրս եկայ կրկէսի հրապարակը։ Բայց ես արդէն շատ խորը զղջացի։

—Դուք զղջացի՞ք որ՝ ինձ միջոց տուիք զգալ իմ նախապաշարմունքների անիրաւացիութիւնը, որ զէնքը ձեռին ապացուցիք մեր ազգի քաջութիւնը և արժանացաք, փոխանակ ձեր կողմից արհամարհած արծաթի պսակի, յաղթութեան պսակին և ընդհանուր զարմանքին։ Միայն մի բանի մասին դուք կարող էք զղջալ և ափսոսալ—որ հրապարակ չդուրս եկաք բաց երեսով, ճակատը բարձր. ամէնքը պէտք է իմանային, որ յաղթողը—Ցոյն է։

—Ի՞նչ հարկաւոր էր, դառնութեամբ պատասխանեց Խամարէթը. փախստականները փաթաթուում և թաղնուում են իւրեանց ամօթի մէջ, նոքա չեն երևում ճակատը բարձր աշխարհի երեսին։

—Ա՛խ. ուրեմն այժմ ես պէտք է պաշպանեմ ձեզ այն մեղադրանքներից, որ դուք բարդում էք ձեր վերայ, գոչեց Աննան։ Միթէ միայն դո՞ւք էք, որ չգիտէք թէ ձեր փառաւոր յաղթութիւնների համբաւը տարածուած է ամբողջ Արևելքում։ Ես յիշում եմ թէ որպիսի անհամբերութեամբ սպասում էր հայրս տեսնել Պելոպոնէսի պաշտպանին. և երբ դուք ժամանեցիք Արտա...

—Ձեր հայրը տեսաւ մի մարդ, որ կրում էր իւր ճակատի վերայ յաղթուածի կնիքը և որ քարշում էր իւր ոտների վերայ սարկութեան շղթաները...

—Հայրս տեսաւ այն մարդուն, որ դիւցազնաբար պաշտպանում էր Լակեդեմոնի պարիսպները և յաղթուեցաւ միայն այն ժամանակ, երբ ամրոցի պատնէշները ընկան հոսանքից, որ հեղեղեց ամբողջ Պելոպոնէսը։

—Լակեդեմոնի պարիսպնե՛րը, պատասխանեց Առիւծը, գլուխը շարժելով։ Շնորհակալ եմ պալասանի համար, որ դուք աշխատում էք լցնել իմ սրտի վէրքերի վերայ։ Բայց կա՛ր ժամանակ, երբ Լակեդեմոնը չունէր ոչինչ պարիսպներ —նոցա տեղը բռնում էին նորա զաւակների կուրծքերը։ Այն ժամանակ թշնամին երբէք չէր տեսնում իմ հայրենիքի օջախներից դուրս եկած ծուխը։ Կա՛յին օրեր, երբ Լակեդե-

մոնի երեք հարիւր քաղաքացիների մարմինները կանգնեցրին ամբողջ Ասիայի հոսանքը։

Ինչո՞ւ այդ օրերը այլևս երբէք չեն վերադառնում. գիտէ՞ք թէ ի՞նչը ջնջեց նոցա ընդմիշտ վիճակի դպրութեան մէջ։ Գիտէ՞ք թէ ի՞նչը գլորեց շղթայակապ Ցունաստանը Հռոմայեցիների ոտի տակ. ի՞նչը խոնարհեցրեց նորան Ֆրանկների երկաթի ձեռքի տակ, երբ նա ոտի էր կանգնել կոթնելով խաչի վերայ։—Մարդասպան երկպառակութիւնը, այդ նզոված հրէշը, դժոխքի ծնունդը։

—Այդ տխուր մտքերը ճնշում են ձեզ, ասաց Աննան ցաւակցութեամբ։ Բայց ո՞վ կարող է կանգնեցնել ճակատագրի անիւը։

—Բայց մեր Ցունաստանը, շարունակեց Խամարէթը, այնպէս գեղեցիկ է. այստեղ մշտական գարունք է։ Այս երկիրը ստեղծուած է բախտաւորութեան համար, սրբազնացած է ազատութեամբ։ Այո՛, Աննա՛, մենք վախկոտ ենք և փախստական։ Ապա թէ ոչ, տեսնելով մեր հայրենիքը գերութեան և ստրկութեան մէջ բարբարոսների ձեռքին, մենք պիտի կարմրէինք նայելով մեր հովիտների վերայ—ազատութեան այդ հին պատերազմական դաշտերի վերայ, նայելով մեր սարերի վերայ—մեր հին փառքի այդ արձանների վերայ. մենք պիտի կարմրէինք այն անուան համար, որը կրում ենք, մենք պիտի կարմրէինք յիշելով մեր նախնիքներին, և այն ժամանակ չէինք վազի յաղթութեան քամակից կրկէսներում...։ մեր նախնիքները, երբ չէին մնում յաղթող, գիտէին մեռնե՛լ։

Խամարէթը խաչեց կուրծքի վերայ ձեռքերը և կորացրեց նորա վերայ իւր դեղնացած երեսը։

Աննան վերկացաւ և թեթև կերպով բռնելով ձեռքը ասաց.

—Առի՛ւծ, Առի՛ւծ, նայեցէք արեգակի վերայ. նա լըցնում էր երկինքը իւր ճառագայթների փայլմունքով, իսկ այժմ և նա մարում է արևմտքի մթութեան մէջ։ Դա ընդհանուր օրէնք է և ազգերը չեն կարող ղերծ մնալ դորանից։ Մի՛ վրդովուիք Աստուածային նախասահմանութեան դէմ։

—Ո՛չ, գոչեց Խամարէթը, մեր հայրենիքի անկումն

կատարուեցաւ ոչ Աստուծոյ նախասահմանութեամբ, այլ դա դևի գործ էր, երկպառակութեան դևի։ Արևը մայր մտաւ, բայց վաղը նա դարձեալ կբարձրանայ իւր փառքի բոլոր շքեղութեամբ։ Եւ Ցունաստանը՝ կարող է բարձրանալ այդպէս, եթէ միութեան հրեշտակը կիջնի նորա վերայ։

—Աստուած տայ, ասաց Աննան։ Դա մի ազնիւ ցանկութիւն է, և իմ սիրտս միանում է դորա հետ բոլոր ոգևորութեամբ։

—Ձեր սիրտը միանո՞ւմ է դորա հետ, ոգևորուած բացականչեց Խամարէթը։ Ո՛հ, միթէ Աստուած լսեց իւր ժողովրդի աղօթքներին. միթէ նա ուղարկեց հրեշտակը, որ առաջնորդէ մեզ դէպի ազատութիւն։ Հրեշտակ։ Աստուած, որ պարգևել է ձեզ հրեշտակային գեղեցկութիւն, չլինի թէ ուղարկել է ձեզ երկրի վերայ բերել դորան խաղաղութեան և միութեան աւետիքը—ազատութեան պարգևները։ Ձեր մի հայեացքը, ձեր մի ժպիտը—և ահա կբորբոքուի բոցը սրտերի մէջ, և մեր հին կայսրութեան յօշոտած սնդամները կմիանան, կկազմեն մի ամբողջութիւն, անյաղթելին իւր միութեան մէջ,—և ալեկոծութիւնից ազատուած բեկորներից կկանգնի վերստին Բիւզանդիայի սրբազան գահը...

—Ամէն, արտասանեց մի ձայն քամակից—դա Պետրալիֆան էր։

—Այո՛, ո՛րդիս, դա մեծ փափագ է։ Մենք ամենքս ի հարկէ միանում ենք ձեր ցանկութեան, բայց այն երկրում, ուր իշխում է Վիլլարդուինը, այն տան մէջ, որտեղից նա դուրս գնաց միայն այս բոպէիս, աւելի խոհեմութիւն կլիներ, հաւատացէք ինձ, զսպել քան թէ յայտնել այդ աղգասիրական խանդերը։

—Ես երբէք չեմ ծածկիլ իմ կարծիքս Հայրենիքիս ներկայ դրութեան մասին և իմ ցանկութիւնս ազատել նորան. և այժմ չեմ ծածկի այդ նորա նուաճողներից։

—Հաւատացէք իմ փորձառութեան, պատասխանեց Պետրալիֆասը,—ծառերը պտուղ են տալի միայն այն ժամանակ, երբ նոցա արմատները ծածկած են հողի տակ։ Բայց նախատելով որդուս, ես պէտք է նախատեմ և աղջկաս. ի՞նչպէս դու, Աննա՛, կարողացար այն աստիճան յափշտակուիլ ազգասիրական ոգևորութեամբ որ՝ մոռացար

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)



Այս 1898 թուին հրատարակւում է երկու գիրք։

Առաջին գիրքը լոյս տեսաւ յունուարի 1-ին, իսկ երկրորդը կհրատարակուի յուլիսի 1-ին։



«ԼՈՒՄԱՅ» հանդիսի բաժանորդագինն է տարեկան 3 ռ. Իւրաքանչիւր գիրքն առանձին արժէ 2 ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, протоіерею Гюту Аганьянцъ.

Հրատարակիչ՝ Գիւտ ա. քահ. Աղանեանց

Lotus

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սուրբ Էջմիածին, Արշակ Կայծունի 1
Դէորգ աւետարան, Պերճ Պոշեանց 3
Դլմիկներ, Ա. Մկրտչեան 49
Դեի արտասուքը, Ա. Կայծունի 59
Անգլիական դպրոց, Հ. Լիցի. թարգ. Ա. Սալարապետեան 72
Կաշառք, Պատապէնկոյի, թրգմ. Տիրուհի Կոստանեան . 98
Մշոյ աշխարհ. 131
Գիւղի այրին, Յար. քահ. Ճուղուրեան 176
Կանոն ոսկերիչ արհեստաւորաց 193
Վարակիչ հիւանդութիւններ, գերմ. թրգմ. բժշկ. Ս. Մայսուրեանց 210

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Նորայր Ն. Բիւզանդացի 232

ՊԱՏՄԱԿԱՆ

Պատուիկներ 247
Նիւթեր դպրոցական պատմութեան 249
Ս. Նաղաբեանի նամակներ. 252
Տիւզեանց պատմութիւն 258

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Գաւառաբառեր.—Երկրագործական սայլի վերաբերեալ . . 270
Կալի և իւր գործիքների » . . 272
Անդասանի » . . 273
Ձիթահանքի » . . 275
Վանի կեանքից.—Գոմշաթող 278
Մանկախաղ 279
Հարսանիքի երգ 280
Գովք վիճակին 281
Ծոյլ աղջկայ երգ. 282
Վիճակի երգեր 283
Հանելուկներ 285
Հայկավանք 286